нора (родственника), или непарный – сердце, легкие, поджелудочная железа – с помощью трупной пересадки органов [4]. В настоящее время в мировой практике пересадки органов от живого донора реципиенту составляют малое количество. Рассматривая опыт Украины, отметим, что в 1999г. Верховная рада отменила презумпцию согласия, заменив ее на испрошенное согласие. Это негативно сказалось на трансплантологии в стране. Из-за чего до последнего времени в Украине проводились лишь редкие операции по трансплантации органов, так как население не соглашалась на дачу разрешения на изъятие органов. Ситуация изменилась только после принятия в 2016г. закона «О внесении изменений в некоторые законодательные акты Украины относительно трансплантации органов и других анатомических материалов человеку» [5]. Вторжение в область охраняемых законом прав и свобод единовременно донора и реципиента создает для общества значительное количество социальных, правовых и этических проблем.

Отметим, что в России с 1937 по 1992гг. действовало Постановление Совнаркома СССР «О порядке проведения медицинских операций», в соответствии с которым тела граждан после смерти переходили в собственность государства, а врачи имели право использовать их органы в целях общественных интересов. Государство с помощью инструкций регулировало весь процесс по донорству и трансплантации [6]. Во многих странах сегодня используются по большой части трупные органы при пересадках почек, печени, кишечника, поджелудочной железы. Внесение в клиническую практику современных иммунодепрессантов, противодействующих отторжению чужих органов, на сегодня предоставила возможность эффективного и массового применения в трансплантологии трупных органов. Следует отметить, что на законодательном уровне в РА недостаточно урегулирован вопрос предоставления иммунодепрессантов лицам, которым была проведена операция по трансплантации органов.

Ниже произведен анализ истории развития законодательства некоторых западных стран для наиболее целого представления и правового регулирования этой области медицины.

В 1932г. Гражданским кодексом Италии был установлен запрет пересадки яичек. Это стало первым шагом законодательного закрепления норм права, которые регулировали трансплантацию органов от живых доноров. Прецедентом оказался факт продажи богатому пациенту своего яичка неимущим молодым человеком. Законы, регулирующие прижизненное органное донорство, впоследствии были приняты в Чехословакии – 1966г., Дании, Италии – 1967г. В 1970-х гг. к ним присоединились Венгрия (1972г.), Болга-

рия (1973г.), Коста-Рика (1974г.) и Аргентина (1977г.). Однако эти нормативные акты не распространялись на все существующие проблемы в трансплантологии той поры и были крайне далеки от идеала.

Есть ряд обстоятельств, определяющих своеобразность трансплантации с использованием органов живых доноров. В первый раз за всю историю медицины врачи при трансплантации органов от живых доноров встретились с ситуацией, когда необходимо было оперировать абсолютно здорового человека, наряду с этим удалять для трансплантации невредимый орган. Все эти факторы поставили перед законодателями многих развитых стран вопросы по разрешению проблем органного донорства при жизни человека. Это допустимость неродственных трансплантаций, определение объема дозволенного для донора вреда здоровью, установление круга лиц, которым недозволенно является донором своих органов, разработка юридической базы в области донорство органов. В статье 9 «Дополнительного протокола о трансплантации органов и тканей человеческого происхождения к Конвенции Совета Европы о защите прав и достоинства человеческих существ в связи с использованием достижений биологии и медицины» закрепляются два основных положения правомерности трансплантации с использованием донорских органов живых. Необходимо подчеркнуть, что эти положения юрисдикциями всех цивилизованных стран бесспорно признаются. Это следующие положения: Первое – отчуждение у живого донора органа или ткани с целью дальнейшей их пересадки может осуществляться лишь в случаях отсутствия соответствующих органов или тканей, которые изымаются у умершего лица. Второе – проведение такого продуктивного лечения альтернативными методами недостижимо [7].

Следующим важнейшим документом в области трансплантологии являются утвержденные в 1991 году Всемирной организацией здравоохранения (ВОЗ) «Руководящие принципы, регламентирующие трансплантацию органов человека», упорядочивающие трансплантацию органов и тканей человека, рекомендованные для применения при разработке политики в этой области. Вышеуказанные принципы лежат в основе внутренних законодательств многих стран, в которых развивается область трансплантологии. В соответствии с третьем из этих принципов: «Предпочтительно для пересадки брать органы у умерших. Взрослые живые доноры должны иметь генетическую связь с реципиентами и, исходя из этого, возможно осуществление безвозмездной передачи собственных органов. Исключениями являются лишь случаи трансплантации костного мозга и иных допустимых регенеративных тканей» [8]. Более того, был принят ряд иных актов, которые содержат реко-

мендации по совершенствованию органного донорства и трансплантации. Исходя из вышеуказанного, можно сделать вывод, что в законодательствах большинства стран донор и реципиент должны быть обязательно генетически связаны. Как исключение, из общих правил можно назвать Иран – это государство, в котором закон позволяет неродственные пересадки органов [9]. Кроме Ирана, в мире есть и другие страны, где также не запрещены неродственные трансплантации. Например, в 1998 году в Израиле араб стал донором почки для еврея, а его жена, равным образом, стала донором почки для жены араба, поскольку иного способа добиться совместимости пересаженных органов было невозможно [10].

В истории трансплантологии также известны факты и других видов органного донорства при жизни (священники с монахинями по благословению Папы Римского в Италии, добровольцы-заключенные в США и т.д.). Например, в Германии в 1996 году с целью пропаганды данной процедуры хирург вольно отдал свою почку анонимному реципиенту. Со стороны Министерства здравоохранения Баварии он был подвержен критике за свой поступок, который был воспринят в качестве пропаганды практики, грозящей в дальнейшем угрозой коммерциализации [11].

Из вышеуказанного следует, что правомочие разных стран по-разному определяют круг родственников, имеющих право и возможность быть донорами своих близких.

Например, в соответствии с британским «Актом о трансплантации органов человека» от 1989г., ими могут являться только родители, дети, тети, дяди, двоюродные братья, сестры, племянники и племянницы [12]. Генетическая связь здесь определяется степенью разведения родственной крови: 1/2 и 1/4. По данному Закону, допустимыми донорами бабушки, дедушки и внуки быть не могут. В 1994г. в Индии был принят «Федеральный Акт о трансплантации органов человека», который в качестве допустимых доноров в круг близких родственников включает супругов и устанавливает их как лиц, генетически связанных между собой [13].

Например, в Гонконге близкими родственниками считаются лишь такие супружеские пары, которые после заключения брака прожили вместе не менее трех лет [14].

В некоторых странах допускаются также парные пересадки, при которых имеются две пары донор-реципиент. Это может быть в случае, когда пара родственная, однако по итогам иммунологических и генотипических тестов орган не может быть успешно пересажен родственнику, но может быть пригодным для пересадки реципиенту другой пары. Эта трансплантация за-

конная, но не родственная, как в случае обмена почками между арабской и еврейской семьями [15].

На наш взгляд, в мировой практике презумпция согласия для изъятия органов умерших должна получить значительное развитие, так как это составит огромный резерв необходимых донорских органов для спасения жизни людей. Именно из-за их дефицита возможности современной трансплантологии достаточно ограничены. Считаем, что развитие посмертного донорства представит возможность проводить успешные пересадки без причинения вреда здоровью лиц, которые желают быть донорами для своих родных из-за отсутствия иной альтернативы. В то же время необходимо создание единой базы доноров, чтобы любой человек достигший возраста совершеннолетия имел возможность выражения согласия быть донором после смерти или отказаться, после чего данные сведения будут вносится в реестр. Кроме этого, считаем, что есть необходимость создания единого координирующего центра по трансплантологии человеческих органов и тканей. А также остается неразрешенным вопрос детского донорства, который является достаточно большой проблемой в связи с запретом несовершеннолетним выступать донорами. Органы взрослых не соответствуют детям и они вынуждены ждать помощи из-за рубежа, в то же время в мире введен мораторий на запрет пересадки сердца иностранцам лицам. Из выше представленного можно сделать вывод, что трансплантология как отрасль современной медицины находится в строгой зависимости от законодательного регулирования и усовершенствования законодательства в этой области является первостепенным.

ЛИТЕРАТУРА

1. История трансплантологии ФБГУ «НМИЦ им. В.А. Алмазова» //http://www. Almazova-centre.ru
2. Закон РА «О трансплантации человеческих органов и тканей» 16.04.2002 с поправками 19.03.2009//www.arlis.am
3. Закон РФ «О трансплантации органов и (или) тканей человека», введенный в действие Постановлением Верховного Совета Российской Федерации 22.12.92 № 4181-1, дополнения, внесенные 22.06.2000 Федеральным законом «О внесении дополнений в Закон Российской Федерации» и «О трансплантации органов и (или) тканей человека» с изменениями от 23 мая 2016г. и др. // КонсультантПлюс.
4. *Степанова Е.Н.* Трансплантация органов человека: мировой опыт и Россия (гражданско-правовой аспект): дис. канд. юрид. наук. М., 2004. 228с. // [Эл. ресурс].
5. Проект закона Украины от 16.07.2015 № 2386а «О внесении изменений в некоторые законодательные акты Украины относительно трансплантации органов и других анатомических материалов человеку» // [Эл. ресурс].
6. Постановление Совнаркома СССР «О порядке проведения медицинских операций» от 15 сентября 1937г. № 1607// «Российская газета».

7. Конвенция о защите прав и достоинства человека в связи с применением достижений биологии и медицины: Конвенция о правах человека и биомедицине. Овьедо, 4 апреля 1997г. // «Библиотека по правам человека».
8. World Health Organization, 15.03.1991 A 44/11. In: International Digest of Health Legislation, 1991, vol. 42, no. 3. PP. 393–394.
9. *Daar A.* Reimbursement, “Reworded Gifting”, Financial Incentives and Commercialism in Living Organ Donation // Collins G., Dubernard J., Land W., Persijn G., eds. Procurement, Preservation and Allocation of Vascularized Organs. Kluwer, Dordrecht, 1997. PP. 310–316.
10. Israeli Kidney Swap Unites Jews and Muslims // Lancet. 1998. Vol. 351. PP. 351–1644.
11. German Transplant Surgeon Donates His Kidney // Lancet. 1996. Vol. 348. P. 72.
12. Human Organ Transplant Act // United Kingdom. 1989. PP. 12–35.
13. The (Federal) Transplantation of Human Organs Act // India. 1994. No. 42. PP. 38–50.
14. Hong Kong Human Organ Transplant Bill // Hong Kong. 1992. Vol. 52. PP. 399–408.
15. Israeli Kidney Swap Unites Jews and Muslims // Lancet. 1998. Vol. 351. PP. 351–1644.

HISTORY OF RENEWAL AND LEGAL REGULATION OF ORGAN DONATIONS

T. Martirosyan

ABSTRACT

This article dedicated to history of renewal and legal regulation of organ donation. Analyzes the legislation of RA, RF and other countries. Recommended a number of mechanisms for improving the legislation in the areas of organic donation.

Keywords: legal regulation, transplantology, transplantation, organ donation, donor, recipient, etc.

ЭКОНОМИКА И МЕНЕДЖМЕНТ

УДК 005.95/.96
Поступила: 14.11.2020г.
Сдана на рецензию: 15.11.2020г.
Подписана к печати: 27.12.2020г.

ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ՎՐԱ

Լ.Ա. Օհանյան

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա
lilit.ohanian@yandex.ru

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացված են կոնֆլիկտի դրական և բացասական գործառույթները, կազմակերպություններում դրանց առաջացման պատճառները, կոնֆլիկտի զարգացման փուլերն ու լուծման տարատեսակ ձևերի ազդեցությունը կազմակերպության մարդկային ռեսուրսների աշխատանքային գործունեության և մոտիվացիայի վրա: Ներկայացվում են ղեկավարի դերն ու գործողությունները կոնֆլիկտների արդյունավետ կառավարման և մարդկային ռեսուրսների մոտիվացման գործում:

Հիմնաբառեր. կոնֆլիկտ, կոնֆլիկտի կառավարում, մոտիվացիա:

Կոնֆլիկտը, որպես մարդկության պատմության անբաժան գործոն, ընկած է աշխարհի զարգացման հիմքում: Հասարակության զարգացմանը զուգընթաց վերափոխվել են կոնֆլիկտները: Կոնֆլիկտը հասարակական հարաբերությունների անհերքելի փաստերից է և սոցիալական փոփոխությունների շարժիչ գործոն: Կոնֆլիկտներ հանդիպում են մարդկային բոլոր հարաբերություններում: Սխալ մոտեցում կիրառելու դեպքում կոնֆլիկտը վնաս է հասցնում անհատներին, հարաբերություններին, կազմակերպություններին, համայնքներին և ազգերին: Ճիշտ մոտեցում դրսևորելու պարագայում այն օգնում է վեր հանել և լուծել խնդիրները, կառուցել ավելի ուժեղ ու սերտ հարաբերություններ [1]:

Կոնֆլիկտն անխուսափելի է, երբ երկու կամ ավելի սոցիալական միավորներ (օրինակ՝ անհատներ, խմբեր, կազմակերպություններ, ազգեր) շփվում են միմյանց հետ՝ ձգտելով հասնել իրենց նպատակներին:

Նման միավորների միջև հարաբերությունները կարող են դառնալ կոնֆլիկտային, երբ նրանցից երկուսը կամ շատերը ցանկանում են տիրանալ նույն ռեսուրսին, որը բավարար չէ բոլորի համար, երբ նրանք համատեղ գործունեության վերաբերյալ ունեն վարքագծային նախընտրություններ, տարբեր դիրքորոշումներ, արժեքներ, հայացքներ և հմտություններ [2]:

Կոնֆլիկտը դիտարկում են որպես մարդկանց փոխազդեցության պայման, որի հիմքում ընկած են հակասությունները, սոցիալական հարաբերություններում գտնվող սուբյեկտների արժեքների և հետաքրքրությունների միջև տարբերությունները: Կոնֆլիկտների առաջացման պատճառ կարող են լինել նաև պատկերացումների, հայացքների, համոզմունքների, արժեքների ընկալման տարբերությունները: Կոնֆլիկտը բնութագրվում է որպես «բախում անհատի հոգեկանում միմյանց դեմ ուղղված միտումների, մարդկանց և նրանց ֆորմալ ու ոչ ֆորմալ միավորումների փոխհարաբերություններում, որոնք պայմանավորված են տեսակետների, դիրքորոշումների և շահերի տարբերություններով [3]: Ըստ Ա.Վ. Սերգեյչուկի՝ կոնֆլիկտն անհատների անհամատեղելի նպատակների, հետաքրքրությունների, դիրքորոշումների, կարծիքների, հայացքների բախում է» [4]:

Կոնֆլիկտը կազմակերպություններում իրավաչափ ու անխուսափելի է և համարվում է արդյունավետ կազմակերպչական կառավարման դրական ցուցանիշ: Ներկայումս ընդունված է, որ կոնֆլիկտը որոշակի սահմաններում կարևոր է աշխատանքի արդյունավետության համար: Թեթև կոնֆլիկտը կամ դրա իսպառ բացակայությունը կարող է հանգեցնել լճացման, սխալ որոշումների կայացման և անարդյունավետության: Մյուս կողմից, չվերահսկված կոնֆլիկտն անբարենպաստ հետևանքներ կարող է ունենալ: Այսպիսով՝ հիմնական գաղափարն այն է, որ կոնֆլիկտի բացակայությունը հանգեցնում է լճացման, իսկ չափազանց շատ կոնֆլիկտները կարող են առաջացնել կազմակերպության կազմաքանդում:

Կոնֆլիկտները կարող են կատարել ինչպես դրական, այնպես էլ բացասական գործառույթներ: Կոնֆլիկտի դրական գործառույթներից են.

- այն օգնում է բացահայտել իրավիճակը տարբեր տեսանկյուններից,
- կարող է դառնալ լրացուցիչ տեղեկատվության աղբյուր,
- օգնում է ավելի շատ այլընտրանքներ գտնել ստեղծված իրավիճակում,
- ստիպում է խմբի որոշումների կայացման գործընթացն առավել արդյունավետ դարձնել,

- հնարավորություն է տալիս մարդկանց արտահայտել իրենց մտքերն ու տեսակետները,
- խթանում է գտնել պլանների, ռազմավարությունների և նախագծերի առավել արդյունավետ իրականացման ուղիներ,
- հաճախ տանում են դեպի ավելի ստեղծարար լուծումների,
- կարող է խթանել անձնական, սոցիալական կամ տնտեսական զարգացումը,
- կարող է իրականացնել միավորող գործառույթ (խումբը համախմբվում է՝ կոնֆլիկտի մյուս կողմին դիմակայելու և համընդհանուր լուծում գտնելու համար),
- կոնֆլիկտի հանգուցալուծումը հանգեցնում է իրավիճակի կայունության, քանի որ վերանում են կոնֆլիկտածին պատճառները,
- կարող է ձևավորել նոր կազմակերպական մշակույթ և աշխատանքային փոխհարաբերություններին նոր բովանդակություն հաղորդել,
- ճանաչողական գործառույթի միջոցով կոնֆլիկտի կողմերը կարող են ճանաչել ոչ միայն սեփական ուժերն ու կարողությունները, այլև հակառակ կողմի ներուժը,
- կարող է օգնել ձերբազատվելու բնավորության անցանկալի գծերից, օրինակ՝ անլիարժեքության զգացումից, մեծամտությունից,
- կոնֆլիկտային ողջ գործընթացը աշխատակցի մոտ ձևավորում է մարդկային փոխհարաբերությունների կենսափորձ՝ հետագայում օգնելով զարգացնել հաղորդակցական հմտությունները:

Վերոնշյալ դրական գործառույթներից բացի կոնֆլիկտը կատարում է մի շարք բացասական գործառույթներ, որոնցից են.

- աշխատակիցների փոխհարաբերությունների վատթարացումը,
- աշխատակիցների մոտիվացիայի բացակայությունը և արտադրողականության անկումը,
- համագործակցության նվազումը կամ բացակայությունը կոնֆլիկտի ընթացքում և դրանից հետո,
- անհատի պահանջմունքների բավարարման և ընդհանուր առմամբ կազմակերպության նպատակներին հասնելու գործընթացի խաթարումը,
- թիմում սոցիալ-հոգեբանական մթնոլորտի վատթարացումը,
- կոնֆլիկտների լուծման համար համագործակցելու ցանկության բացակայությունը,
- կոնֆլիկտի հանգուցալուծման նյութական և բարոյական ծախսերը,

- մյուս կողմի նկատմամբ բացասական վերաբերմունքի ձևավորումը և հետագայում նույն թիմում աշխատելու ցանկության բացակայությունը,
- աշխատակցի մոտ ընկճվածության, հիասթափության, տագնապի, անինքնավստահության զգացումների առաջացումը:

Այսպիսով, կոնֆլիկտը կարող է ունենալ ինչպես կառուցողական, այնպես էլ ապակառուցողական գործառույթներ և համապատասխանաբար ազդել ողջ աշխատանքային գործունեության՝ մասնավորապես աշխատակիցների մոտիվացիայի վրա:

Կոնֆլիկտների ավելացմանը նպաստում է կոնֆլիկտների արդյունավետ կառավարման հմտությունների բացակայությունը: Մասնավորապես՝ կոնֆլիկտն ինքնին չի կարող ազդել կազմակերպության վրա, կատարել կառուցողական կամ ապակառուցողական գործառույթներ. կոնֆլիկտի լուծումը կախված է կոնֆլիկտի արժեքի՝ աշխատողի անձնական գիտակցումից ու ըմբռնումից և կոնֆլիկտների կառավարման հմտություններից: Կոնֆլիկտները կազմակերպության զարգացման անբաժանելի մասն են, այդ իսկ պատճառով կոնֆլիկտի դրական կամ բացասական կողմը կախված է նրանից, թե որքանով է ղեկավարը արդյունավետ կառավարում այն, ինչպես են հասկացվում և չեզոքացվում կոնֆլիկտի առաջացման պատճառները, իրականացվում են արդյոք կոնֆլիկտների կանխարգելման աշխատանքներ կամ ստեղծվում է արդյոք կոլեկտիվում աշխատանքային բարենպաստ միջավայր:

Կազմակերպությունում կոնֆլիկտներն անխուսափելի են, քանի որ մարդիկ տարբեր են, հետապնդում են իրենց անձնական շահերը, ունեն իրենց սեփական պատկերացումներն ու հայացքները: Աշխատանքային կոլեկտիվում կոնֆլիկտ է առաջանում այն ժամանակ, երբ կողմերից մեկը գտնում է, որ մյուս կողմն իր գործողություններով կամ մտադրություններով սպառնում է իրեն, խտրականություն է դրսևորում, ստեղծում է լարված իրավիճակ, նվազեցնում է իր դերային արժեքը կազմակերպությունում և այլն [5]: Կոնֆլիկտները պետք է հմտորեն վերահսկել և կառավարել: Կոնֆլիկտների կառավարումը նպատակաուղղված ազդեցություն է կոնֆլիկտի գործընթացի վրա, իսկ կոնֆլիկտները հաղթահարելու համար անհրաժեշտ է իմանալ դրանց կառավարման հիմնական միջոցները: Յուրաքանչյուր զարգացում ենթադրում է կոնֆլիկտային իրավիճակ, քանի որ մարդիկ միշտ գտնվում են աճման, զարգացման գործընթացի մեջ և ոչ միշտ են նրանց ցանկությունները, պահանջմունքները, նպատակները, արժեքները համընկնում: Նպատակահարմար է ունենալ համապատասխան հմտություններ և կարողություններ կոնֆլիկտային

իրավիճակների հաղթահարման համար, քան մշտապես վախենալ, խուսափել կամ բացասաբար վերաբերվել այդ իրավիճակներին [6]:

Քանի որ աշխատողները, ղեկավարները և արհմիությունները տարբեր նպատակներ են հետապնդում, կոնֆլիկտը պետք է կառավարվի աշխատանքային հարաբերությունների կարգավորման արդյունավետ քաղաքականությամբ: Վերջինս ներառում է բողոքարկման ընթացակարգերը, վարքականոնը և ներքին կարգապահական կանոնակարգերը [7]: Կազմակերպությունը պետք է ունենա սահմանված կանոնակարգ, և ղեկավարներն ու աշխատողները պետք է քաջատեղյակ լինեն այդ ընթացակարգին՝ մասնավորապես յուրաքանչյուրն իր դերակատարության մասով:

Կազմակերպությունում կոնֆլիկտը մարդկանց և խմբերի միջև փոխգործակցության գործընթացում առաջացող շահերի և տեսակետների հակասությունների գոյության ձև է: Ղեկավարը կազմակերպության այն դեմքն է, ով ղեկավարում, համակարգում և վերահսկում է ենթակաների գործունեությունը: Նրա ջանքերի արդյունքը կազմակերպության մարդկային ռեսուրսների խմբավորված, ուղղորդված և համակարգված աշխատանքն է: Մարդկային ռեսուրսների կառավարումն աշխատակիցների համալրման, վերապատրաստման, գնահատման և փոխհատուցման գործընթացն է, որն զբաղվում է վերջիններիս աշխատանքային հարաբերությունների կարգավորման, առողջության պահպանման, անվտանգության ապահովման դրույթներով [8]: Այս առումով, ելնելով կազմակերպության ռազմավարությունից՝ մարդկային ռեսուրսների կառավարման գլխավոր խնդիրն աշխատակիցների վարքագծի ուղղորդումն է, որը ներառում է նաև կոնֆլիկների կառավարումը: Ղեկավարության ամենակարևոր խնդիրներից է մարդկային ռեսուրսների կառավարման միջոցով ուղղորդել աշխատակիցների վարքագիծը, կառավարել և լուծումներ գտնել կոնֆլիկտային իրավիճակներում, ինչպես նաև մոտիվացնել աշխատակիցներին, քանի որ առանց մոտիվացիայի վերջիններս չեն կարող ունենալ աշխատանքի անհրաժեշտ արդյունավետություն:

Մոտիվացիան կազմակերպական նպատակներին հասնելու համար աշխատակցի գործունեության արդյունավետության խթանման գործընթացն է [9]: Մոտիվացիան մեծապես ազդեցություն է ունենում աշխատանքի կատարողականի վրա: Աշխատակիցների մոտիվացումը ղեկավարների կողմից մշակվող կառավարման քաղաքականություն է, որի նպատակն է կազմակերպություններում բարձրացնել աշխատանքի արդյունավետությունը [10]: Մոտիվացիան չի կարելի համարել անձի անփոփոխհատկանիշ, որը բնորոշ է միայն որոշ մարդկանց և բացա-

կայում է ուրիշների մոտ: Այն սահմանափակված է ժամանակային առումով և անձին բնորոշ հատկանիշների, նպատակների, պահանջմունքների, շահադրդող ուժերի ամբողջություն է, որն առաջանում է նպատակին հասնելու գործընթացի ժամանակ և իրավիճակի փոխազդեցության արդյունքում» [11]:

Կազմակերպության ղեկավարը կամ մարդկային ռեսուրսների կառավարիչը պետք է կարողանա լուծել կոնֆլիկտները, քանի որ կազմակերպության ներսում յուրաքանչյուր տեսակի կոնֆլիկտ ազդում է աշխատակիցների մոտիվացիայի վրա: Կոնֆլիկտների բացասական գործառույթներից խուսափելու համար անհրաժեշտ է արդյունավետորեն կազմակերպել կառավարման գործընթացը և աշխատողների հետ հաստատել ոչ կոնֆլիկտային փոխհարաբերություններ: Կոնֆլիկտների լուծման համար անհրաժեշտ է հաշվի առնել միմյանց շահերը, պաշտոնեական դիրքերի միջև եղած տարբերությունները, հոգեբանական անհատական առանձնահատկություններն ու զգացմունքային վիճակը, տարբեր կողմերի միջև առկա տարաձայնությունների լուծման մեթոդը [12]:

Կոնֆլիկտների լուծման կարողությունը, ճանաչողական, զգայական և վարքագծային հմտությունները զարգացնելու և կիրառելու ունակությունն է, որով ապահովվում է կոնֆլիկտի արդյունավետ լուծումը՝ նվազեցնելով դրա տարածման կամ հասցրած վնասների հավանականությունը: Կոնֆլիկտների լուծման կարողության արդյունքն են՝ հարաբերությունների բարելավված որակը, ստեղծարար լուծումները, ապագայի մարտահրավերներն և հնարավորություններն ընդունելու վերաբերյալ երկարաժամկետ, կայուն համաձայնությունները [13]:

Կոնֆլիկտների կառավարումը մենեջմենթի յուրահատուկ գործառույթներից մեկն է: Այս պատճառով, յուրաքանչյուր ղեկավարի կարևոր խնդիրն է կառուցողական օգտագործել կոնֆլիկտները, կանխել դրանց բացասական հետևանքները: Կոնֆլիկտն արդյունավետ կառավարելու համար պետք է իմանալ, թե ինչպես են դրանք առաջանում և ընթանում, ինչպես կարելի է վերացնել: Կիբանովը կոնֆլիկտների առաջացման պատճառները բաժանում է 3 խմբի [14]:

- Պատճառների առաջին խումբը ձևավորվում է աշխատանքային գործընթացի արդյունքում՝ փոխկախվածությունը, սահմանափակ ռեսուրսները, անարդյունավետ հաղորդակցման գործընթացը, աշխատողի դերի անորոշությունը, կազմակերպության տեսլականը, աշխատանքի մեթոդները: Այս պատճառների բացասական ազդեցությունը նվազեցնելու համար կարևոր են հստակ հրահանգների ու առաջադրանքների ձևակերպումը, աշխատանքային գործողու-

թյունների արդյունավետ կատարումը, տեղեկատվության փոխանակման ճանապարհին առաջացած խնդիրների վերացումը: Այս ամենը կբերի ոչ միայն կոնֆլիկտային իրավիճակների նվազեցման, այլև կվերացնի աշխատանքից անբավարարվածությունը և կնպաստի մոտիվացիայի բարձրացմանը:

- Երկրորդ խումբը ընդգրկում է սոցիալ-հոգեբանական գործոնները՝ խառնվածքը, բնավորությունը, ընկալումը, սպասումները, վերաբերմունքը, արժեքները, սկզբունքները, ունակությունները, պահանջմունքները, հետաքրքրությունները, շահերը: Այս խմբի կոնֆլիկտները կարող են պայմանավորված լինել կողմերի ակնկալիքների անհամապատասխանությամբ, ինչպես նաև մեկ այլ անձի անարդար, կողմնակալ գործողությունների շահերի սահմանափակմամբ:
- Երրորդ խումբը կազմակերպության գործունեության մեջ փոփոխություններն են՝ նորարարական միջոցները, որոնց արդյունքում աշխատակցի մոտ երբեմն առաջանում է դիմադրություն նորարարություններին և կոնֆլիկտ կազմակերպչական միջավայրի հետ: Փոփոխության գործընթացում մարդկանց դիրքորոշումը փոխվում է: Այստեղ շատ բան կախված է կառավարչի կառավարման ոճից: Փորձագետները կարծում են, որ ավտորիտար ոճն արդյունավետ է միայն շատ կարևոր փոփոխությունների ժամանակ, երբ անհրաժեշտ է լինում անմիջապես վերացնել դիմադրությունը: Շատ դեպքերում ժողովրդավարական ոճը նախընտրելի է, երբ դեմ լինողների ընդդիմությունը նվազում է՝ սկզբնական հակառակորդներին իրենց կողմը ներգրավելով:

Ցանկացած կոնֆլիկտ ունի իր զարգացման դինամիկան և անցնում է որոշակի փուլերով, որոնցից յուրաքանչյուրում ղեկավարը կարող է իր մասնակցությունն ունենալ՝ փորձելով արդյունավետորեն կառավարել այն և տանել դեպի կառուցողական լուծումը: Դմիտրևը կոնֆլիկտը ներկայացնում է որպես զարգացող գործընթաց, որը բաղկացած է 4 փուլից [15]: Նշված փուլերի շրջանակներում դիտարկվել է ղեկավարի հնարավոր գործողությունները, որոնց իրականացումը կնպաստի կոնֆլիկտի կողմերի մոտիվացիայի բարձրացմանը:

1. Առաջին փուլը կոնֆլիկտի սկիզբն է: Ստեղծվում է միջադեպ, առաջանում է կոնֆլիկտային իրավիճակ: Այս փուլում ցանկալի կլիներ, որ ղեկավարը նկատեր կոնֆլիկտային իրավիճակի առաջացումը և զբաղվեր դրա չեզոքացմամբ:

2. Երկրորդ փուլը կոնֆլիկտի վերելքն է: Հարաբերությունները սրվում են, և հակասությունների կուտակումից միջադեպը վերածվում է կոնֆլիկտի: Այս փուլում ղեկավարը կարող է հանդիպել կողմերից յուրաքանչյուրի հետ, լսել նրանց տեսակետները, ակնկալիքները, լուծման հնարավոր տարբերակները և փորձել խուսափել կոնֆլիկտի սրումից:

3. Երրորդ փուլը կոնֆլիկտի գագաթնակետն է: Դիտվում է կոնֆլիկտի էսկալացիա, կողմերի ընդդիմության ակտիվացում, հարաբերությունների ճգնաժամ: Ղեկավարի խնդիրն է խուսափել կոնֆլիկտի կողմերի միջև հարաբերությունների ճգնաժամից, քանի որ այդ իրավիճակը բացասաբար կանդրադառնա կողմերի մոտիվացիայի և աշխատանքի արդյունավետության վրա:

4. Չորրորդ փուլը կոնֆլիկտի անկումն է: Կոնֆլիկտը մարում է, հարաբերությունները կամ հարթվում են, կամ տեղի է ունենում դրանց վերջնական խզում: Ղեկավարի խնդիրն է լուծել կոնֆլիկտը մինչև կողմերի հարաբերությունների վերջնական վատթարացումը: Մարդկային ռեսուրսների կառավարման տեսանկյունից կոնֆլիկտի արդյունավետ լուծման համար կարևոր է վերացնել նրա իրական պատճառը և թույլ չտալ, որպեսզի կոնֆլիկտը ձգձգվի և ազդի աշխատակիցների մոտիվացիայի վրա:

Վերոնշյալ փուլերից յուրաքանչյուրն իրականացնելիս ղեկավարի խնդիրն է հաշվի առնել կոնֆլիկտի կողմերից յուրաքանչյուրի մոտիվացիայի առանձնահատկությունները, քանի որ կոնֆլիկտի անարդյունավետ լուծումը մեծապես կազդի աշխատակիցների մոտիվացիայի վրա: Կոնֆլիկտի կառավարումը ղեկավարի ունակությունն է տեսնել կոնֆլիկտային իրավիճակը, վերլուծել այն և իրականացնել ուղղորդված սոցիալ-հոգեբանական գործողություններ այն լուծելու համար: Կազմակերպությունում կոնֆլիկտների կառավարման արդյունավետությունը պայմանավորված է այն մեթոդների կիրառմամբ, որոնք օգտագործվում են կազմակերպությունում կոնֆլիկտների լուծման, ինչպես նաև աշխատակիցների մոտիվացիայի բարձրացման ու կատարողականի բարելավման գործընթացներում: Կոնֆլիկտների կառավարման ոչ արդյունավետ կազմակերպման դեպքում կազմակերպությունը կարող է ունենալ ինչպես մարդկային, այնպես էլ նյութական ռեսուրսների կորուստներ: Կոնֆլիկտի կառավարումը կոնֆլիկտային իրավիճակը վերահսկելու և դրա լուծմանն ուղղված գործողությունների իրականացումն է: Կոնֆլիկտի կառավարումը ներառում է հետևյալ փուլերը՝

1. Կոնֆլիկտի ըմբռնում և իրավիճակի նախնական գնահատում: Կոնֆլիկտի նախնական փուլում ղեկավարը կարող է նկատել աշխատա-

կիցների մեջ առաջացած կոնֆլիկտային իրավիճակը մի շարք բնութագրիչներից, որոնցից են աշխատակիցների միջև համագործակցության նվազումը, լարված փոխհարաբերությունները, մոտիվացիայի բացակայությունը, աշխատունակության նվազումը:

2. Կոնֆլիկտի պատճառների ուսումնասիրում: Այս փուլում ղեկավարը պետք է կատարի կոնֆլիկտային իրավիճակի վերլուծություն, որը ներառում է կոնֆլիկտի մասնակիցների շահերի ու նպատակների պարզաբանումը: Կատարվում է հակամարտության լուծման հնարավոր ուղիների և դրա հետևանքների գնահատում, կոնֆլիկտային իրավիճակի հաղթահարման ռազմավարությունների մշակում:

3. Կոնֆլիկտի լուծման ուղիների որոնում և համապատասխան գործողությունների իրականացում: Այս փուլը ենթադրում է [16]՝

1. հակամարտության դադարեցում և կողմերի փոխադարձ հաշտեցում,
2. փոխզիջման ձեռքբերում,
3. կոնֆլիկտի գործնական լուծում (պահանջների բավարարում կամ պատժամիջոցի կիրառում),
4. կոնֆլիկտի մեխանիկական լուծում (ստորաբաժանումներից մեկի լուծարում, կոնֆլիկտի կողմերից մեկի աշխատանքից ազատում կամ նրա փոխադրում այլ ստորաբաժանում և այլն): Նման մոտեցումն անխուսափելի է, երբ կոնֆլիկտն այլ ճանապարհներով լուծելն անհնար է:

Կարտաշևը [17] առանձնացնում է կոնֆլիկտի ավարտի հետևյալ փուլերը.

1. Կոնֆլիկտի լուծումը տարաձայնությունների ավարտի ամենահարմար տարբերակն է: Աշխատակիցների մոտիվացիայի տեսանկյունից այս ձևն ամենաարդյունավետն է, քանի որ խնդրի ամբողջական լուծման արդյունքում առաջացած տարաձայնությունները կհասցվեն նվազագույնի և չեն անդրադառնա աշխատանքային գործունեության վրա:

2. Կոնֆլիկտի կարգավորումը տարաձայնությունների ամբողջական լուծումն է: Սակայն, ի տարբերություն նախորդի՝ այս դեպքում հնարավոր է երրորդ կողմի մասնակցությունը: Կոնֆլիկտի կարգավորման շրջանակներում ղեկավարն իր գործուն մասնակցության շնորհիվ կարող է կարգավորել կոնֆլիկտը՝ վերադարձնելով աշխատանքային առողջ մթնոլորտը:

3. Կոնֆլիկտի վերացումը կոնֆլիկտի տարրերից գոնե մեկի լիկվիդացիան է: Սա լավագույն միջոցը չէ, քանի որ այն չի լուծում խնդիրը, այլ միայն «անջատում է» կոնֆլիկտի տարրերը միմյանցից: Այս դեպքում

նպատակահարմար է վերացնել այն առարկան, որի շուրջ տեղի է ունեցել կոնֆլիկտը, ինչից հետո կողմերը կարող են վերադառնել բնականոն աշխատանքի:

4. Կոնֆլիկտի խլացումը նրա լուծումը չէ: Այն ավելի շուտ վեճի դադարեցումն է և կոնֆլիկտի վերածումն է թաքնված ձևի: Ընդդիմախոսների միջև հակասությունները մնում են: Ղեկավարը պետք է խուսափի կոնֆլիկտի լուծման այս տարբերակից, քանի որ այն կխորացնի առաջացած լարվածությունը և բացասաբար կանդրադառնա աշխատանքային գործունեության մոտիվացիայի վրա:

Կոնֆլիկտների լուծումը դյուրին գործընթաց չէ, և, ըստ Ս. Կոզլովի [18], դրանք լուծելիս ղեկավարը կարող է թույլ տալ հետևյալ սխալները.

- Կոնֆլիկտը լուծելու փորձեր կատարել՝ առանց դրա ճշգրիտ պատճառների պարզաբանման, այսինքն՝ առանց ախտորոշում անցկացնելու:
- Կոնֆլիկտի սառեցումը: Կողմերի տարանջատումը և նրանց գործունեության ոլորտների սահմանափակումը կարող են որոշ դրական ազդեցություն ունենալ: Սակայն նույնիսկ գոյություն ունեցող սուբյեկտների փոխարինումը կհանգեցնի կոնֆլիկտի վերսկսելուն մեկ այլ ակտիվ անդամի հետ:
- Կոնֆլիկտի առարկայի և իրական ընդդիմախոսների սխալ սահմանում: Երբեմն կոնֆլիկտի մեջ ներգրավված ակտիվ ընդդիմախոսներն անկախ խաղացողներ չեն, այլ գործում են իրական ընդդիմախոսների թելադրմամբ, որոնք նախընտրում են ինչ-ինչ պատճառներով մնալ ստվերում: Սխալից խուսափելու համար պետք է իրականացվի աշխտորոշում, որի հիմնական հարցն է՝ «Ու՞մ է շահավետ սա»:
- Գործողությունների ձգձգում: Այս դեպքում ղեկավարը ոչ միայն չի լուծում կոնֆլիկտը, այլև անորոշության պայմանները բացասաբար են ազդում կողմերի մոտիվացիայի վրա:
- Երկու կողմերի հետ բանակցող միջնորդի անհաջող ընտրությունը: Միջնորդը չի կարող լինել պատահական որևէ մեկը: Ցանկալի է, որ նա լինի կազմակերպության ղեկավարը, մարդկային ռեսուրսների կառավարիչը կամ կողմերից յուրաքանչյուրի անմիջական ղեկավարը:
- Հույզերի և լարվածության հետ աշխատանքի բացակայություն, մինչդեռ կոնֆլիկտը մշտապես ուղեկցվում է մեծ լարվածությամբ և հուզական անհանգստությամբ: Շատ վտանգավոր է, երբ հույզերը առաջնային տեղ են զբաղեցնում, քան գիտակցությունը: Հուզական

ոչ կայուն վիճակը բացասաբար է ազդում աշխատակիցների մոտիվացիայի վրա:

- Կոնֆլիկտների ավարտը պետք է արտացոլվի կազմակերպական մշակույթի ու նորմերի փոփոխությունների և լրացումների մեջ: Ողջ կազմակերպական մշակույթը պետք է ուղղված լինի աշխատակիցների մոտիվացիայի բարձրացմանը, քանի որ միայն մոտիվացված աշխատակիցն է ունակ ցուցաբերելու աշխատանքի բարձր արդյունավետություն:

Կոնֆլիկտի վերջնական լուծումը կլինի մասնակիցների հուզական լարվածության վերացումը, այսինքն՝ ներանձնային կոնֆլիկտների բացակայությունը: Խնդիրն առավել արդյունավետ է լուծվում բանակցությունների, զրույցների, պարզաբանումների միջոցով: Կոնֆլիկտի ամբողջական լուծումը հնարավոր է միայն փոխադարձ շահերի հիման վրա բանակցություններում, ինչը թույլ է տալիս անցնել վարքի գործընկերական ձևին և համագործակցության ռազմավարության: Միայն կոնֆլիկտի ավարտից ու ամբողջական լուծումից հետո կարող է վերականգնվել աշխատանքային առողջ մթնոլորտը և աշխատակիցների մոտիվացիան:

Կոնֆլիկտների հաղթահարման տեսանկյունից անհրաժեշտ է վերլուծել և բացահայտել կոնֆլիկտը կազմող կողմերի պահանջմունքները և հնարավորության դեպքում բավարարել դրանք,հասկանալ, որ շատ հաճախ դիրքորոշումները և հետաքրքրությունները չեն համընկնում: Այն պարագայում, երբ կոնֆլիկտները ոչ մի կերպ լուծել հնարավոր չէ, հարկավոր է այն մեղմել, ստեղծել միջավայր, որում կողմերը կունենան համագործակցային նորմալ փոխհարաբերություններ՝ անկախ նրանց միջև կոնֆլիկտի առկայությունից:

Կազմակերպություններում կոնֆլիկտների կառավարումն ունի նաև տվյալ երկրին բնորոշ գծեր, որոնք առավել ընդունելի են այս կամ այն պետության կամ ազգի համար: Մասնավորապես՝ Գերմանիայում կոնֆլիկտների լուծման նպատակով օգտագործվում են կոնֆլիկտի կանխարգելման, նախազգուշացման, վերացման, վերահսկման մեթոդները: Գերմանիայում կոնֆլիկտի արդյունավետ կարգավորման նպատակով ղեկավարը պետք է նախապես ուսումնասիրի կոնֆլիկտների առաջացման բոլոր հնարավոր աղբյուրները և բացառի դրանց ազդեցությունը անձնակազմի վրա: Հակասությունների պատճառները բացահայտելու համար ղեկավարի կողմից կազմակերպվում են ժամանցի տարբեր միջոցառումներ, դասընթացներ և հետազոտություններ, որի արդյունքում տեղի է ունենումանձնակազմի միվորում, և նվազում է կոնֆլիկտների առաջացման վտանգը, ինչը խթանում է նաև վերջիններիս մոտիվացիայի

բարձրացմանը: Ղեկավարը կարողանում է մտերմանալ անձնակազմի հետ, ինչը հանգեցնում է նրան, որ կոնֆլիկտների առաջացման դեպքում մեծացնում է դրա հաջող լուծման հավանականությունը [19]: Այստեղից կարելի է եզրակացնել, որ Գերմանիայում առավել զարգացած է կոնֆլիկտների կանխարգելման մեթոդը: Կոնֆլիկտների կանխարգելման նկարագրված համակարգը գերմանական կազմակերպությունների առավելություններից է, ինչը նրանց առավել մրցունակ է դարձնում այլ երկրների կազմակերպությունների հետ համեմատությամբ:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում կոնֆլիկտների կարգավորման առավել կիրառելի մեթոդը միջնորդությունն է: Միջնորդությունը կոնֆլիկտի կարգավորման մեթոդ է, որին մասնակցում է երրորդ կողմը, որն ուղղակիորեն հետաքրքրված չէ, թե ինչպես է այն ավարտվելու: Երրորդ կողմի դերը կարող են ստանձնել մեկ անձ, կամ մի խումբ մասնագետներ: Միջնորդությունն ունի լավ զարգացած և ստուգված տեխնոլոգիա: Կոնֆլիկտների կառավարման միջնորդության մեթոդը ԱՄՆ-ում սկսել է կիրառվել 1960 թվից ի վեր: Ներկայումս բազմաթիվ կազմակերպություններ կիրառում են այն կոնֆլիկտների կարգավորման գործընթացում, քանի որ այդ մեթոդի կիրառմամբ ձեռք բերված համաձայնությունների շուրջ 90% -ն իրականացվում է, իսկ կազմակերպության ներսում վերականգնվում է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտն ու աշխատակիցների մոտիվացիան:

Ճապոնիայում, որտեղ ներկազմակերպական կոնֆլիկտները հասցված են նվազագույնի, կոլեկտիվի անդամները գտնվում են ընկերական հարաբերություններում: Ճապոնական կազմակերպություններում ղեկավարը զբաղեցնում է ամենապատասխանատու պաշտոնը, ով և միավորում է կոլեկտիվը՝ կանխարգելելով կամ վերացնելով կոնֆլիկտային իրավիճակները: Ճապոնիայում տարածված կադրային քաղաքականությունն արտահայտում է այդ երկրի պատմական առանձնահատկությունները, հասարակական-տնտեսական դրվածքի տարբերությունները, մշակույթը և հասարակության հոգեբանությունը: Ճապոնացիներն իրենց երկրի հիմնական հարստությունը համարում են մարդկանց՝ դիտարկելով ոչ թե առանձին անհատին, այլ խմբին: Կառավարման ճապոնական մոդելի շրջանակներում ղեկավարության գլխավոր նպատակը կազմակերպության արդյունավետության բարձրացումն է, որը մեծապես իրականացվում է աշխատակիցների մատիվացիայի և կատարողականի բարձրացման միջոցով: Ճապոնիայում կազմակերպության արդյունավետ գործունեության գրավականն ասոցացվում է բարձր որակավորում ունեցող և արդյունավետ անձնակազմի հետ: Այդ պատճառով մոտիվաց-

մանը տրվում է առաջնային նշանակություն: Աշխատանքի արդյունավետության բարձրացման և կարգապահության պահպանման նպատակով ճապոնացի ղեկավարները առավել կիրառում են մոտիվացիայի պարգևատրման, քան պատժի մեթոդները:

Ուսումնասիրելով և հաշվի առնելով նաև կոնֆլիկտների կառավարման և անձնակազմի մոտիվացիայի միջազգային փորձառությունը, առաջարկվում է կազմակերպություններում կոնֆլիկտային իրավիճակների նվազեցման նպատակով խուսափել ներքոնշյալ գործողություններից․

- անմիջական բացասական վերաբերմունք դիմացինի նկատմամբ անկախ կազմակերպությունում վերջինիս զբաղեցրած դիրքից, կրթական աստիճանից կամ լիազորություններից.
- հրամայական տոնի, սպառնալիքների, մեղադրական արտահայտությունների, ընդգծված հեգնանքի բացակայություն դիմացինի հանդեպ.
- մեծամիտ վերաբերմունքի, հանդիմանանքների, ծաղրանքի և անհարկի նկատողությունների վերացում միմյանց հետ շփման ընթացքում.
- կտրուկ գնահատականների, սեփական խորհուրդների կամ տեսակետի պարտադրում շրջապատի մարդկանց.
- անցյալի տհաճ իրադարձությունների, արդեն իսկ կատարված սխալների անհարկիհիշեցումներ.
- անազնվության (իմացածի մտածված կոծկում)և ստախոսության կիրառում աշխատակիցների հետ փոխհարաբերություններում.
- էթիկայի կանոնների խախտում և անքաղաքավարի սովորությունների առկայություն (չբարևել, խոսակցության մեջ չներգրավել, անբարյացակամություն դրսևորել, խոսակցին ընդհատելու հակվածություն),
- պարտականությունների և լիազորությունների չկատարում, թերի կատարում կամ սեփական պարտականությունները դիմացինի վրա բարդելու միտում.
- անտեղի վիճարկումներ, ճշմարիտ նկատողություն ստանալու դեպքում մեղավորությունն ուրիշների վրա բարդելու հակվածություն:

Վերոնշյալ քայլերի պահպանումը ղեկավարին և աշխատակիցներին հնարավորություն կտա խուսափել մի շարք կոնֆլիկտներից, որոնց առաջացումը և լուծումը պահանջում են լրացուցիչ ջանքեր, ժամանակ ու միջոցներ, ինչպես նաև ազդում են աշխատակիցների մոտի-

վացիայի վրա: Առանձնացվում են կոնֆլիկտի լուծման հետևյալ ուղիները, որոնց կիրառման դեպքում կոնֆլիկտների կառավարման գործընթացն առավել արդյունավետ կիրականացվի և չի խոչընդոտի աշխատակիցների մոտիվացիայի բարձրացմանը.

- համագործակցության մթնոլորտի ստեղծում,
- հարաբերությունների և հաղորդակցման պարզության ձգտում,
- կոնֆլիկտի առկայության ճանաչում,
- պայմանավորվածություն կոնֆլիկտի հաղթահարման մասին (որտեղ և ինչպես են սկսվում հաղթահարման աշխատանքները),
- կոնֆլիկտի ուրվագծում, այսինքն՝ որոշել այն որպես փոխադարձ խնդիր, որը պետք է լուծվի,
- համաձայնության ստացում,
- լուծման ժամանակահատվածի որոշում,
- պլանի կատարում,
- արդյունքի գնահատում:

Կոլեկտիվում առաջացող կոնֆլիկտների հաղթահարմանն ուղղված՝ ղեկավարները պետք է իրականացնեն կառավարման կառուցողական քաղաքականություն, որոնց շարքում են աշխատանքի նկատմամբ պահանջների պարզաբանումը, աշխատակցից սպասվող արդյունքների պարզաբանումը, կազմակերպության հիերարխիկ կառուցվածքի ստեղծումը, որպեսզի ցանկացած աշխատակից իմանա իր դիրքը, իրավասությունները և պարտականությունները, գնահատման ու խրախուսման համակարգի ճիշտ կիրառությունը, որը թույլ կտա իջեցնել կոնֆլիկտների առաջացման հավանականությունը: Ղեկավարի գործողությունների հիմքում պետք են լինի աշխատակիցների մոտիվացիայի հիմնահարցերը, քանի որ միայն բարձր մոտիվացիա ունեցող աշխատակիցներն են ապահովում աշխատանքի բարձր արդյունավետություն և կազմակերպության առաջընթաց: Մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարման նախադրյալներից է կազմակերպական մշակույթի ստեղծումը՝ ներառելով կոնֆլիկտների կառավարման և աշխատակիցների մոտիվացման արդյունավետ համակարգերի կիրառում:

Յուրաքանչյուր կազմակերպությունում անհնար է խուսափել կոնֆլիկտներից, սակայն արդյունավետ կառավարման դեպքում հնարավոր է խուսափել դրա առաջացրած բացասական հետևանքներից՝ վերադարձնելով աշխատանքային առողջ սոցիալ-հոգեբանական մթնոլորտը և աշխատելու մոտիվացիան:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Dues M.*The Art of Conflict Management: Achieving Solutions for Life, Work, and Beyond, USA. Virginia, 2010. PP. 1.
2. *Rahim M.*Managing Conflictin Organizations, Third edition, London, 2001. PP. 1.
3. *Веснин В.* Практический менеджмент персонала: Пособие по кадровой работе, М., 2007. СС. 145.
4. *Сергейчук А.* Социология управления, Москва, 2002. СС. 212
5. *Максимцева И.* Управление человеческими ресурсами. М., 2012. СС. 309
6. *Рыбакова М.* Конфликт и взаимодействие в педагогическом процессе, М., 1991. СС. 127.
7. *Rowley Ch., Jackson K.* Human Resource Management. The Key Concepts, Great Britain. 2011. PP. 81.
8. *Dessler G.*, Human Resource Management, 13th ed., Florida, 2012. PP. 4.
9. *Львов Л.* Педагогический менеджмент: учебное пособие, Челябинск, 2008, СС. 103
10. *Shadare O., Hammed A., Ayo T.* Influence of Work Motivation, Leadership Effectiveness and Time Management of Employees,Nigeria, European Journal of Economics, Finance and Administrative Science, 2009, no. 16, pp. 7-17.
11. Кирхлер Э., Родлер К. Мотивация в организациях. Психология труда и организационная психология, Харьков, 2008. СС. 13.
12. *Максимцева И.* Управление человеческими ресурсами. М., 2012. СС. 314.
13. *Craig E., Tim A.*Developing Your Conflict Competence, USA, 2010. PP. 2.
14. *Кибанов А., Ворожейкин И.,Захаров Д., Коновалова В.*Конфликтология, Москва, 2005., СС. 85.
15. *Дмитриев А.* Конфликтология, М., 2005. 318 С.
16. *Лукашевич В.* Основы управления персоналом, М., 2012. СС. 218.
17. *Карташев Я*. Конфликты в организации, М., 2010, 78 С.
18. *Козлов С.* Конфликт в организациях, Научный вестник МГТУ ГА. 2007. №113. URL: https://cyberleninka.ru/article/n/konflikt-v-organizatsiyah (09.03.2020).
19. *Козлов А.* Сравнительная характеристика методов профилактики конфликтов в организациях Федеративной Республики Германия и Российской Федерации. Научно-методический электронный журнал «Концепт». 2016. Т. 34. с.146–152. URL: http://e-koncept.ru/2016/56753.htm.

ВЛИЯНИЕ КОНФЛИКТОВ НА МОТИВАЦИЮ ЧЕЛОВЕЧЕСКИХ РЕСУРСОВ ОРГАНИЗАЦИИ

Л.А. Оганян

АННОТАЦИЯ

В статье представлены позитивные и негативные функции конфликта, причины их возникновения в организациях, этапы развития конфликта и влияние различных типов разрешений конфликтов на работу и мотивацию человеческих ресурсов организации. Представлена роль и действия руководителя в эффективном управлении конфликтом и мотивации человеческих ресурсов.

Конфликт, как неотъемлемый фактор в истории человечества, лежит в основе развития мира. Конфликт является одиним из

неоспоримых фактов общественных отношений и движущий фактор социальных изменений. Конфликты возникают во всех человеческих отношениях. При неправильном подходе конфликт отрицательно влияет на человека, на отношения, на организацию, на сообщество и на страны. При правильном подходе помогает выявлять проблемы, строить более крепкие отношения.

Конфликт рассматривается как условие человеческого взаимодействия, в основе которого лежат противоречия, различия между ценностями и интересами субъектов социальных отношений. Конфликты также могут быть вызваны различиями в восприятии, взглядах, убеждениях и ценностях.

Отсутствие конфликта ведет к застою, а слишком много конфликтов может привести к распаду организации. Конфликты выполняют как положительные, так и отрицательные функции. Среди положительных функций конфликта можно выделить:

• конфликт помогает выявить ситуацию с разных сторон,

• повышает эффективность группового принятия решений,

• позволяет людям выражать свои мысли и мнения,

• способствует личному, социальному или экономическому развитию,

•выполнет объединяющую функцию (группа объединяется, чтобы противостоять другой стороне конфликта),

• разрешение конфликта приводит к стабилизации ситуации, так как причины конфликта исчезают,

• посредством когнитивной функции стороны конфликта могут распознавать не только свои сильные стороны и возможности, но и потенциал противной стороны,

Помимо вышеуказанных положительных функций, конфликт выполняет ряд отрицательных функций, в том числе:

• отсутствие мотивации сотрудников и снижение производительности,

• снижение или отсутствие сотрудничества в течении или после разрешения конфликта,

• нарушение процесса достижения целей,

• ухудшение социально-психологической атмосферы в коллективе,

• материальные и моральные затраты на разрешение конфликта.

Конфликты являются неотъемлемой частью развития организации, поэтому положительная или отрицательная сторона конфликта зависит от того, насколько эффективно менеджер управляет им, как воспринимаются причины конфликта, проводится ли работа по предотвращению конфликтов или создается ли в коллективе благоприятную рабочую среду.

Основная задача управления человеческими ресурсами – направлять поведение сотрудников, управлять конфликтные ситуации, найти пути к их разрешению, а также мотивировать сотрудников, потому что без мотивации у них не будет необходимой производительности.

Мотивация - это процесс повышения производительности труда сотрудников для достижения целей организации. Руководитель организации или менеджер управления человеческими ресурсами должен уметь разрешать конфликты, поскольку каждый конфликт в организации влияет на мотивацию сотрудников. Управление конфликтами - одна из уникальных функций управления. Поэтому важная задача каждого менеджера конструктивно использовать конфликты, предотвращать их негативные последствия.

Управление конфликтом - это способность менеджера определить конфликтную ситуацию, анализировать ее и проводить направленные социально-психологические действия для его разрешения. Эффективность управления конфликтами в организации обусловлена применением методов, которые используются в процессах разрешения конфликтов, а также для повышения мотивации и производительности сотрудников. Управление конфликтом это контролирование конфликтной ситуации и применение действий его разрешения. Управление конфликтом включает следующие этапы:

1. Восприятие конфликта и предварительная оценка ситуации.
2. Исследование причин конфликта.
3.Поиск способов разрешения конфликта и реализация соответствующих действий.

После окончания конфликта выделяются следующие этапы:

1. Разрешение конфликта.
2. Урегулирование конфликта.
3. Устранение конфликта.
4. Заглушение конфликта.

Полное разрешение конфликта возможно только на основе взаимных интересов на переговорах, что позволяет перейти к стратегическому партнерству и сотрудничеству. Только после завершения конфликта и полного разрешения можно восстановить здоровую рабочую атмосферу и мотивацию сотрудников.

Միևնույն ժամանակ, ըստ փորձագետների, երկրում կա միջազգայնացում հասկացության և Բոլոնիայի բարեփոխումների թյուրընկալում: Չնայած Հայաստանի գրեթե բոլոր բուհերն ընդգրկված են այս գործընթացում, սակայն ներկայումս գտնվում են դրա պատկերացումների նախնական փուլերում: Ինչպես հասարակությունը, այնպես էլ կրթության ոլորտի դերակատարները հստակ պատկերացում չունեն Հայաստանի բարձրագույն կրթության համակարգի ռեֆորմների և Բոլոնիայի գործընթացի մասին: Այն ընկալում են որպես «օտար» գործընթաց, որն իրենից ենթադրում է ազգային կրթական համակարգերի փոխարինում նոր համակարգով: Սակայն իրականում այստեղ խոսքը գնում է բարձրագույն կրթության համակարգի հարմոնիզացիայի (ներդաշնակեցման) մասին [12]: Հարկ է նշել, որ այս իրավիճակը բխում է ռեֆորմների նպատակների մասին հստակ պատկերացում չունենալուց, ինչն էլ հանգեցնում է բարձրագույն կրթության ոլորտում փոփոխությունների հարցում մեծ դիմադրության, քննադատության, ինչպես նաև հուսալքություն է առաջացնում, թե որևէ էական բան կարող է փոխվել:

Անդրադառնալով ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի շարժունակության խթանմանը, նշենք, որ այստեղ առկա են մի շարք խնդիրներ: Դրանցից առանցքայինը կրթության ֆինանսավորման անբավարար մակարդակն է երկրում, հատկապես պետական բուհերում, որոնք օգտվում են պետության ֆինանսավորումից: Ընդ որում, վերջին տվյալներով՝ 2017թ.-ին Հայաստանում կրթության պետական ֆինանսավորումը կազմել է ՀՆԱ-ի 2,7%-ը [13]: Բացի այդ շարժունության խթանումը նպաստում է մարդկային կապիտալի արտահոսքին: Բայց ըստ մասնագետների, դա միայն մեր երկրի խնդիրը չի, դա գոյություն ունի նաև այն երկրներում, որոնք չունեն զարգացած տնտեսություն, չեն կարողանում ապահովել քաղաքացիներին աշխատանքով ու սոցիալական պայմաններով, այդ երկրներից, մեծ արտահոսք կա (օրինակ՝ Լիտվան): Այն շրջանավարտները, ովքեր ունեն այդ փորձը, սովորաբար արդեն տիրապետում են օտար լեզուներին և այն մեխանիզմներին, թե ինչպես գտնել նոր կրթության ձև, աշխատել այլ երկրում և չեն ցանկանում վերադառնալ հայրենիք:

Հետազոտության արդյունքների համեմատական վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ միջազգայնացումը նպաստում է մարդկային կապիտալի արտահոսքին՝ 80/20% հարաբերակցությամբ. 80%՝ brain drain [14], իսկ 20%՝ brain circulation [15] (80%՝ ուղեղների արտահոսք, 20%՝ ուղեղների շրջապտույտ): Նրանք դրսում սովորելու հաշվին մասնագիտական և անձնական աճ են ունենում և գալով Հայաստան, (ի դեպ Հայաստան գալը պարտադիր պայման է), հետո արդեն ազատեն և տարբեր հանգամանքներից ելնելով հեռանում են: Ինչպես նշեց ԳԱԱ-ի փորձագետը՝ «...Լավ դասախոսը, ուսանողը մի՛շտ գնալու է՝ միայն ֆինանսական մոտիվացիան է, որ կարող է լավ մասնագետներին երկրում պահել: Շատերն են նշում, որ կցանկանային մնալ այստեղ, բայց ֆինանսական տարբերություններն ակնհայտ են»:

Իսկ ինչ վերաբերվում է մարդկային կապիտալի վերարտադրությանը, ապա պետք է նշել, որ ցավոք սրտի բուհերը որևէ կերպ չեն մասնակցում այդ գործընթացին, քանի որ բարձրագույն կրթությունը դարձել է հանրակրթության շարունակության ինչ-որ ձև: Բայց անհրաժեշտ է գիտակցել, որ մարդկային կապիտալն այն շրջանավարտն է, ով ՀՀ գիտակից քաղաքացի է և կարող է ներդրում ունենալ ոչ միայն տնտեսության զարգացման, այլ նաև հասարակության մեջ: «... Ոչ մի բուհ չի կարողացել ունենալ նման քաղաքացի: Այսօր մեր բուհերում բացակայում է նաև այն, ինչը Խորհրդային Միության ժամանակ բավականին լավ էր դրված: Այն քանդվեց, և չզարգացավ ժամանակի տենդենց-

ներին համապատասխան: Դա արժեհամակարգի և գաղափարախոսության բացակայությունն է, արժեքների ներկայացումն է: Ինչքանով է շրջանավարտը բուհի արժեքների կրողը և հետնորդը: Նույնն, օրինակ, չի կարելի ասել Ամերիկյան համալսարանի մասին, որտեղ շատ ուժեղ կապ կա շրջանավարտների հետ, դա հենց ամերիկյան մշակույթն է: Նրանք ունեն մի գաղափարախոսություն՝ give back, pay back, եթե նրանք ստանում են, ինչ-ոչ բան, ապա ինչ-որ ձևով հետ են վերադարձնում, նրանց մոտ բարձր է հասարակական ակտիվությունը: Բավականին մեծ գնահատական են տալիս հասարակական ակտիվությանը՝ ինչ ես արել հասարակության համար, ինչ օգուտ ես բերել», - հավելեց ԵՊԼՀ փորձագետը:

Միջազգայնացման մյուս բաղադրիչի՝ ինստիտուցիոնալ համագործակցության ոլորտում Հայաստանը բավականին զարգացած է: Կան համագործակցության բազմաթիվ համաձայնագրեր: Երկրում գործում են միջազգային բուհեր՝ ռուս-հայկական, ամերիկյան, ֆրանսիական համալսարանները, որոնք թողարկում են միջազգային դիպլոմներ և այդ երկրների կրթական մշակույթի ու ավանդույթների կրողնեն: Ինչպես պետական, այնպես էլ միջազգային համալսարանները ունեն միջբուհական բավականին շատ համաձայնագրեր ու պայմանագրեր (մասնավորապես՝ Ռուսաստանի, Վրաստանի, Ռումինիայի, Հորդանանի, Չինաստանի, Լեհաստանի միջև [16]):

Այն, թե արդյոք Հայաստանի կրթական համակարգը կարելի է համարել ազգային՝ փորձագետների կարծիքները բաժանվեցին 2 խմբի.

Նրանց մի մասի կարծիքով մեր կրթական համակարգը բավականին ազգային է, ինչը բացատրվում է, նախ նրանով, որ օրենքով ամրագրված է կրթության բոլոր մակարդակներում դասավանդել բացառապես հայոց լեզվով, պարտադիր է հայոց պատմություն, էկոլոգիա առարկաները. դա բավական ազգային առանձնահատկություն է: Սակայն պետք է նշել, որ դրանք հանրակրթության մակարդակում ապահովվող գիտելիքներ են, ոչ թե բարձրագույն, և չենք կարող ասել, թե դրանով ազգային խնդիրներ են լուծվում: Մյուս կողմից, մեր երկրում կրթության բացառապես հայոց լեզվով դասավանդելը խոչընդոտ է հանդիսանում և դժվարեցնում է օտարերկրյա ուսանողների ներգրավումը: Հիմնական պատճառներից մեկն էլ հենց դա է, որ Հայաստանը եվրոպական բարձրագույն կրթական տարածքում իր կրթական համակարգով մրցակցային երկիր չի ընկալվում: Այստեղից էլ բխում է անհապաղ օրենսդրական փոփոխություններ իրականացնելու կարիքը, որից հետո հնարավոր կլինի

գործիքակազմ ներդնել և բարեփոխումներն իրականացնել ստորին օղակներում:

Ինչպես նշում են այս խմբի առանցքային տեղեկատուները, միջազգային ծրագրերին մասնակցող հայ ուսանողների մոտ ավելի ակնհայտ և առավել արտահայտված է պատկանելիությունը ազգային կրթությանը, նույնիսկ չափից շատ է ազգային պատկանելիության զգացողությունը:

Ազգային կրթական համակարգը ԱՊՀ երկրներին չի զիջում կրթության որակով, իսկ եվրոպական մյուս երկրների հետ մրցակցության մեջ մտնելու և միջազգայնացման գործընթացների լիարժեք իրականացման համար պետք է ունենանա համապատասխան բոլոր նախապայմաններն ու չափանիշները՝ լաբորատորիաներ, ժամանակակից տեխնիկաներ, հետազոտական կենտրոններ և այլն: Նման կերպ հնարավոր չէ ապահովել կրթական համակարգի մրցունակությունը:

Այս առումով առաջնային խնդիր է դառնում հասկանալ, թե ինչպես բարձրացնել ՀՀ ԲԿՀ մրցակցությունը, ինչպես միջազգայնացման գործընթացին լիարժեք մասնակցել: Անհրաժեշտ է ցույց տալ, թե ինչ կարող է Հայաստանի կրթական համակարգն աշխարհին առաջարկել (դրանք կարող են լինել հայկական կոմպոնենտի վրա հիմնված ազգային ծրագրեր, համատեղ ծրագրեր, նոր մասնագիտություններ, նոր ուղղություններ)՝ հաշվի առնելով մեր հայկական սփյուռքը, որը բաց է նոր առաջարկների, գաղափարների համար:

Իսկ մյուս կողմի մոտեցմամբ, այսօր միջազգայնացումը բերում է նրան, որ մեր կրթական համակարգը ազգային չլինի: Ազգայինի և միջազգայինի սահմանը շատ նուրբ է: Ինչպես նշեց ոլորտի փորձագետների ցմեկը, մեր կրթական համակարգը ինքնուրույն չի, դեռևս կան Խորհրդային միությունից մնացած և միջազգային տարբեր երկրներից կրկնօրինակած տարրեր, այսինքն հայկականը դեռևս չձևավորված՝մենք անցանք եվրոպական օրինակին և կանգնած ենք շատ լուրջ խնդիրների առջև: Մենք մերազգայինը դեռ չունենք և չենք կարող ասել, որն է մեր ազգայինը, որը միջազգայինը: Անհրաժեշտություն կա տարածաշրջանին համապատասխան ազգամետ կրթական համակարգ զարգացնել, այնուհետև միջազգային փորձը տեղայնացնել, հաշվի առնելով տեղի յուրահատկությունները, խնդիրները: «…Մեր շրջանավարտը պիտի պատրաստ լինի փոխել, զարգացնել մեր շուկան, ինքը այսօրվա դրությամբ էդպիսինչի, որովհետև, բուհերն իրենք էլ այդքան լավ չգիտեն երկրի խնդիրները, դրա համար ուսանողներին չեն սովորեցնում, խնդիրը լուծող մարդ չեն սարքում», - այսպես էր բնութագում մեր կրթական համակարգը փորձագետներից մեկը:

Ոլորտի գրեթե բոլոր փորձագետների բնորոշմամբ միջազգայնացման գործընթացները միանշանակ դրական են ազդում մեր կրթական համակարգի վրա, որովհետև ստիպում են աշխատել: Եթե չլինեն միջազգային ծրագրերը, կրթական համակարգը կգնա դեպի լճացում, որովհետև այդ դեպքում ուսանողը, դասախոսն իր վրա չի աշխատի: Եթե կա միջազգային ծրագիր, կա մոտիվացիա, կանստանդարտներ, և միանշանակ այն հանգեցնում է կարողությունների՝ և՛ մարդկային, և՛ տեխնիկական ռեսուրսների կառուցման ու զարգացման: Միջազգայնացումը չի կարող կլանել ազգայինը, քանի որ այն հենց վերաբերում է ազգային կրթական համակարգերի զարգացմանն ու մրցունակության բարձրացմանը:

Այսօր դժվար է նշել մի ոլորտ, որն այս կամ այն չափով ազդեցություն չի կրել COVID-19-ի տարածման հետևանքներից: Կորոնավիրուսային համավարակի ազդեցությունը բարձրագույն կրթության համակարգի վրա տարբեր երկրներում դրսևորվում է տարբեր կերպ և ունի իր առանձնահատկությունները: Այնուամենայնիվ, կարելի է ուրվագծել այդ փոփոխությունների ընդհանուր պատկերը: Համավարակի պայմաններում համալսարանները հայտնվել են դժվար կացության մեջ՝ փորձում են կարճ ժամանակահատվածում հարմարվել իրադարձություններին, զգալի միջոցներ են ծախսում կրթության արագ թվայնացման համար և հաճախ կայացնում են որոշումներ՝ առանց հաշվի առնելու դրանց հնարավոր հետևանքները: Համաճարակը բացասաբար է անդրադարձել կրթության և գիտության բնագավառում միջազգային համագործակցության վրա.

- չեղարկվել են միջազգային ուղևորությունները,
- դադարեցվել են ուսանողների և պրոֆեսորա-դասախոսական կազմի փոխանակման ծրագրերը,
- հետաձգվել են գիտահետազոտական համագործակցության բազմաթիվ ծրագրեր:

Ներկայիս ճգնաժամը հնարավորություն է տալիս նորովի դիտարկել միջազգային բարձրագույն կրթությունը և համաշխարհային գիտությունը: Ստեղծված իրավիճակը ինքնին ցույց է տալիս, որ միջազգային համագործակցությունը լավագույն պատասխանն է գլոբալ մարտահրավերներին: Ուստի ոչ մի երկիր չի ցանկանում բաց թողնել ոչ մի հնարավորություն ձեռք բերելու նոր ռեսուրսներ (գիտելիքներ, հմտություններ, մարդկային կապիտալ): Արդյունքում ի հայտ եկան բաց տվյալներով, գիտական հրապարակումներով և կրթական ռեսուրսներով էլեկտրոնային հարթակներ: Չնայած համավարակի ընթացքում փակվեցին պե-

տությունների ու քաղաքների սահմանները, գիտությունն ու կրթությունը աստիճանաբար դարձան բաց. առավել ակտիվ և խոշոր համալսարանները սկսեցին մշակել արտասահմանյան կրթության նոր սցենարներ և ծրագրերի իրականացման նոր ձևաչափեր, օրինակ վիրտուալ միջազգային ստաժավորումները, ակադեմիական շարժունակության հիբրիդային տարբերակներ և այլն: Դրանց արդյունքում առաջացավ մի նոր հասկացություն՝ «տնային միջազգայնացում»:

Համալսարաններն ու քոլեջները այս սցենարների ազդեցության տակ ստիպված են ստեղծել իրենց ծրագրերի նոր ֆորմատներ: Օրինակ՝ ԱՄՆ Փենսիլվանիայի նահանգի Արկադիայի համալսարանն արդեն առաջարկել է «Վիրտուալ Եվրոպա» անվանումով մի ծրագիր, որի շրջանակներում ուսանողները կարող են գրանցվել ոչ միայն առցանց դասընթացների Լոնդոնի, Դուբլինի, Էդինբուրգի, Բարսելոնայի, Գրանադայի, Աթենքի կամ Հռոմի Արկադիայի համալսարաններում, այլ նաև նույն քաղաքներում գործատուների հետ վիրտուալ պրակտիկաներին և ստաժավորումներին մասնակցելու համար [17]:

Արդյունքում ուսանողները, մասնակցելով մի շարք վիրտուալ ինտերակտիվ միջոցառումների, կարող են սովորել իրենց նախընտրած համալսարանում, մասնագետներից և դասախոսներից ստանալ անհատական խորհրդատվություններ և ծանոթանալ տվյալ երկրի մշակույթին:

Լավագույն ուսանողներին պահելու համար համալսարանները կսկեն պայմանագրեր կնքել նրանց հետ, առաջարկել կրթաթոշակներ, ուսման համար ավելի ցածր գին, հետագայում վիզաների ստացման հեշտացում, ինչ էլ Հայաստանի նման երկրների համար լուրջ խնդիրներ կարող է առաջացնել կապված մարդկային կապիտալի արտահոսքի, ազգային ինքության պահպանման, ազգային կրթական համակարգերի անկման, միջազգային առումով դրանց մրցունակության նզազման հետ:

Ամփոփելով կարող ենք եզրակացնել, որ չնայած մի շարք խնդիրների, Հայաստանն ընդգրկված է բարձրագույն կրթական համակարգ միջազգայնացման գործընթացներում: Եվ կարելի է նշել, որ շատ հաճախ արձանագրված ցուցանիշները չեն արտացոլում իրական պատկերը, ուղղակի ձևական բնույթ են կրում: Միջազգային փորձը, որքան էլ հաջողված լինի, հնարավոր չէ կիրառել առանց հաշվի առնել ուազգային համակարգերի յուրահատկությունները: Այս առումով անհրաժեշտ է հստակեցնել ազգային համակարգերին ներկայացվող պահանջները, սահմանել չափանիշները և այնուհետ դրանք հարմարեցնել միջազգային ստանդարտներին: Եվ այս պայմաններում կրթության արդյունավետ զարգացման համար անհրաժեշտ է վերանայել բարձրագույն

ուսումնական հաստատությունների կառավարման մոտեցումները, հաշվի առնելով ազգային կրթության առանձնահատկությունների պահպանման հիմնախնդիրը և կրթական հաստատությունների ինտեգրումը Եվրոպային Եվրասիայի բարձրագույն կրթության համակարգեր: Դրա հետ մեկտեղ պետք է ինստիտուցիոնալ մակարդակում մշակել նոր մեխանիզմներ, որոնք կիրառելու դեպքում հնարավոր կլինի երկրում վերարտադրել մարդկային կապիտալը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Knight J*. Updating the Definition of Internationalization // International Higher Education. The Boston College Center for International Higher Education. 2003, PP. 2–3.
2. *Altbach Ph*. The International Imperative in Higher Education. Global Perspectives of Higher Education. Sense Publishers. Volume 27. 2013. 194p.
3. *Farrugia C.* Education abroad: Moving out of the classroom and into the real world. 2013. http://www.iie.org/Blog/2013/August/EducationAbroad-Moving-Out-Of-The-Classroom
4. At the same place.
5. *Bedenlier S.* Internationalization within higher education and its influence on faculty: experiences of Turkish academic staff // Journal of Research in International Education. 2017. Vol. 16(2). PP. 185–196.
6. *Краснощеков В.В.* Всесторонняя интернационализация и другие тенденции, влияющие на качество высшего образования. Международный журнал экспериментального образования. 2017. № 6. СС. 43–46.
7. *Knight J.* Internationalization Remodeled: Definition, Approaches, and Rationales // Journal of Studies in International Education. Vol. 8. 2004. PP. 5–31.
8. *Knight J.* Internationalization: Elements and Checkpoints. CBIE Research No. 7. Canadian Bureau for International Education (CBIE)/Bureau canadien de l'éducation internationale (BCEI). 220 Laurier Avenue West, Suite 1550, Ottawa, Ontario K1P 5Z9, 1994.
9. *Castells M.* The Rise of The Network Society. Oxford: Blackwell Publishers, 1996.
10. Տե՛ս EHEA (http://www.ehea.info/page-members)
11. https://ec.europa.eu/education/resources-and-tools/european-credit-transfer-and-accumulation-system-ects_en
12. Internationalisation of Higher Education in Armenia: External Survey-Report 2017
13. Government expenditure on education, total (% of GDP). 2017. URL: https: //data.worldbank.org/indicator/SE.XPD.TOTL.GD.ZS?end=2017&locations=AM&nam=null&start=1996 (10.02.2020.)
14. *Beine M., Docquier, F. & Rapoport H.* (2008). Brain and Human Capital Formation in Developing Countries: Winners and Losers. Economic Journal, 118(528), 631–652.
15. *Saxenian A.L.* From Brain Drain to Brain Circulation: Transnational Communities and Regional Upgrading in India and China." Studies in Comparative International Development 40 (2): PP. 35–61.
16. Տե՛ս միջազգային ծրագրեր/ ՀՀԿԳՄՍՆ. // URL http://escs.am/am/category/inter-programs(10.02.2020)

17. *Галажинский Э.* Пандемия и мировое высшее образование. Интернационализация «на дому http://www.tsu.ru/university/rector_page/internatsionalizatsiya-na-domu/)

ИНТЕРНАЦИОНАЛИЗАЦИЯ ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ В АРМЕНИИ СЕГОДНЯ: АНАЛИЗ ТЕКУЩИХ ПРОБЛЕМ

Е.Г. Аперян

АННОТАЦИЯ

В данной статье представлена часть результатов исследования механизмов процесса интернационализации высшего образования в Армении и их последствий, для получения профессиональных оценок процессов воспроизводства и сохранения человеческого капитала в Армении, путем анализа мнений ряда экспертов.

Образование тесно связано со всеми сферами общественной жизни. Соответственно, функции, выполняемые институтом высшего образования, служат не только деятельности одного социального института, но и всего общества. В этом контексте большое значение имеет качество высшего образования, что напрямую связано и влияет на развитие как учебного заведения, так и других институтов, важных для существования и функционирования общества, включая экономику, здравоохранение, промышленность, сельское хозяйство. Другими словами, качество профессионального образования – один из важных показателей развития и функционирования государства.

«Государственная программа развития образования Республики Армения на 2016–2025 годы» предусматривает, что основным приоритетом в области профессионального образования является повышение качества образования. Как цель и конечный результат предусматривается «к 2025 году значительно увеличить количество молодых людей и взрослых, обладающих профессиональными навыками, чтобы для последних найти достойную работу, снизить безработицу и способствовать развитию бизнеса».

Уровень интернационализации образования – один из важнейших аспектов общественного развития государства, отражающий его проблемы и противоречия. Структурные реформы высшего образования в некоторых университетах Республики Армения начались еще в 90-х годах прошлого века, но стали системными после принятия закона о высшем профессиональном образовании в 2004 году.

Хотя с момента присоединения Армении к Болонскому процессу прошло почти 15 лет, в целом нынешнюю систему высшего образования все еще можно охарактеризовать как переходную. Сегодня в системе высшего образования РА зарегистрирован ряд проблем, связанных с подходом системы образования, нехваткой квалифицированных кадров в университетах, отсутствием мотивированных студентов и так далее. По мнению экспертов, Болонский процесс беспрецедентен как по своим масштабам, так и по глубине, и под влиянием этих реформ в образовательной сис-

теме Армении произошли многие положительные изменения. В структурном отношении Армения достигла значительных успехов. К ним относятся новая структура степеней, новые механизмы и процедуры (например, Европейская модель переноса и накопления кредитов (ECTS)), создание структурных элементов обеспечения качества и так далее. При этом преобладало мнение, что большинство упомянутых изменений были внешними и формальными, а суть и содержание остались неизменными, неясно, в какой степени те, кто их реализуют, являются носителями этих знаний, идеологии, ценностной системы.

Как показыяают исследования, существует ряд проблем, которые препятствуют эффективному осуществлению Болонской реформы в нашей университетской системе. Особое значение имеют фактическое отсутствие государственной финансовой поддержки университетских реформ, отсутствие участия и инертность основных носителей (студентов и преподавателей) реформ, поверхностное осуществление реформ во многих местах, отсутствие долгосрочной национальной стратегии реформ, а так же слабые связи вуз – рынок труда и вуз – общество, продолжающаяся «эрозия» и старение научно-педагогического потенциала.

Результаты исследования позволяют выделить следующие механизмы, при использовании которых можно будет воспроизвести человеческий капитал в стране:

- Очень важно иметь соответствующую стратегию, которая должна быть не просто письменным документом, а конкретными шагами. Они позволят этим акторам внести свой вклад в развитие и воспроизводство человеческого капитала, сесть за один стол, направить на него все свои ресурсы. Если все акторы станут носителями этой системы развития, каждый из них встанет выше своих личных интересов, поставит государственные интересы выше личных интересов, соответствующим образом направит все действия, тогда мы добьемся успеха. Другими словами, нам нужны единство, правильные подходы, командная работа, правильная ориентация.
- Организовать такое высшее образование, которое будет тесно связано с национальными проблемами и с развитием страны.
- Вузы должны готовить таких выпускников, которые смогут работать в соответствии с современными тенденциями развития и проводить производственную практику.
- Необходима идеология, которая создаст такую ценностную среду, которая заставит вернуться в страну. Неважно, это национальная принадлежность или что-то другое (например, в Америке такой национальной идентичности нет, есть государство, гражданство, каждый думает о помощи своему государству на общественных началах).
- Необходимо развивать экономику, обеспечивать достойную зарплату, которая будет способствовать мотивации студентов.
- Необходимо уточнить требования к национальным системам, установить стандарты, а затем адаптировать их к международ-

ным стандартам. И в этих условиях для эффективного развития образования необходимо пересмотреть подходы к управлению высшими учебными заведениями с учетом проблемы сохранения особенностей национального образования, интеграции образовательных учреждений в европейские и евразийские системы высшего образования.

Ключевые слова: высшее образование, интернационализация, Болонский процесс, национальная образовательная система, человеческий капитал.

THE INTERNATIONALIZATION OF HIGHER EDUCATION IN ARMENIA NOWADAYS: THE ANALYSIS OF THE EXISTING PROBLEMS

Y. Aperyan

ABSTRACT

The article analyzes the mechanisms of the process of internationalization of higher education in Armenia and its impact, as well as the processes of reproduction and preservation of human capital based on sociological research. The article states that international experience of internationalization, however successful, cannot be applied without taking into account the specificities of national educational systems. It is therefore necessary to clarify the requirements for national education systems, establish criteria and then adapt them to international standards. At the same time, it is necessary to develop new mechanisms at the institutional level that will allow the reproduction of human capital in the country.

Key words: higher education, internationalization, Bologna process, national educational system, human capital.

ИСКУССТВОВЕДЕНИЕ

УДК 5527

Поступила: 18.11.2020г.
Сдана на рецензию: 21.11.2020г.
Подписана к печати: 15.12.2020г

ՃԱՊՈՆԱԿԱՆ ԿԻՆՈՅԻ ՀԱՋԱՐԱԹԵՎ ԿՌՈՒՆԿԸ

Ա.Ռ. Առաքելյան

Հայ-Ռուսական համալսարան
arsarm2001@yahoo.com

ԱՄՓՈՓՈՒՄ

Տվյալ հոդվածում ուսումնասիրվել են ճապոնական կինոյի առանձնահատկությունները, համաշխարհային կինոարվեստում ճապոնական ֆիլմերի դերն ու նշանակությունը: Ինչպես նաև ուսումնասիրվել են ճապոնական ռեժիսորների յուրահատուկ մոտեցումները և նրանց կարծիքները ճապոնական կինոյի մասին:

Հիմնաբառեր՝ ճապոնական կինո, ֆիլմարտադրություն, մոնտաժ, հիերոգլիֆներ:

Համաշխարհային համբավ վայելող ռեժիսոր Սթիվեն Սփիլբերգը տարբեր ազգերի ֆիլմերի մասին խոսելիս առանձնացնում էր նրանց հերոսներին ու հերոսների արժեհամակարգերը հետևյալ ձևով.

1. Ամերիկյան ֆիլմերում հերոսը սպանում է բոլորին հանուն օրենքի:
2. Ֆրանսիական ֆիլմերում՝ հանուն սիրո:
3. Եբրայական ֆիլմերում՝ հանուն հավատի:
4. Ճապոնական ֆիլմերում՝ հանուն պատվի:

Բայց ժամանակներն անցնում են, փոխվում են նաև հերոսներն ու նրանց արժեհամակարգերը:

Տարանտինոն հարցազրույցներից մեկի ժամանակ նշել է. «Պետք չէ հիասթափվել կամ պնդել, որ կինոն այլևս առաջվանը չէ, որովհետև նման չէ նախկին գլուխգործոցներին» [1]: Իմ գիտնական ընկերներից մեկը մի հետաքրքիր փորձի մասին ինձ պատմեց. «Գցում են մի քանի կապիկների միևնույն սենյակում, սենյակի մեջտեղում դնում են աստիճան, իսկ աստիճանի գլխին՝ բանաններ: Երբ կապիկներից մեկը փորձում

է բարձրանալ աստիճանով, ներքևում մնացածներին դաղում են սառը ջրով: Այդ գործողությունը կրկնվում բավական երկար: Որոշ ժամանակ անց հենց կապիկները տեսնում են, որ իրենցից մեկը փորձում է բարձրանալ աստիճաննով, սկսում են հարվածել, ծեծել նրան: Հետո այդ խմբին ավելացնում մի քանի նոր կապիկ ու որոշում, որ այլևս ոչ մեկին չեն ջրելու բանան վերցնելու համար: Բայց հենց հնաբնակ կապիկները տեսնում են նորեկներից մեկը մոտենում է աստիճանին, անխղճաբար ոտնակոխ են անում: Այդպես այնքան նոր կապիկներ են բերում, որ արդեն չեն իմանում, թե փորձի մասնակից ամենահին կապիկները ինչու են ծեծում իրենց նորեկ կապիկներին: Պարզապես այդպես նրանց փոխանցվել է սերնդեսերունդ»:

Սա հենց կարծրատիպերի, քարացած արժեհամակարգերի պահպանման հատկանիշն է, մենք իքներս չգիտենք, թե դրանք ինչքանով են մեզ պետք, բայց միևնույն է, ցանկանում ենք պահպանել:

Այժմ փոխվել են թե՛ ազգային ֆիլմերը, թե՛ դրանց հերոսները, թե՛ հերոսների նպատակները: Օրենքների երկիր Ամերիկայում ֆիլմերը հիմնականում բռնության ու փողի մասին են՝ շաղախված նախնական բնազդների վրա: Եվ այդ վարակը այս կամ այլ ճանապարհներով ու միջոցներով անցել եվրոպական և ասիական կինոարտադրության արյունատար համակարգը:

BVO հայտնի սոցիալական կազմակերպությունը 2 տարի թե՛ հասարակության, թե՛ մասնագետների շրջանում միջազգային հարցում իրականացնելով՝ դասակարգել է տարբեր ազգերի ֆիլմերն ըստ իրենց նշանակության: Եվ ամենից ուսուցողական գիտահանրամատչելի ֆունկցիա իրականացնողի կոչումը հասել է ճապոնական ֆիլմարվեստին: Բանն այն է, որ, ի տարբերություն այլազգի կինոմատոգրաֆիայի, այստեղ ամենակարևորը յուրաքանչյուր ֆիլմում ազգային մի փշուր, մի կտոր ունենալն է ֆիլմի մեջ [2]: Ակիրա Կուրոսավան պնդում էր, որ ճապոնական ֆիլմը կլինի լավագույնը, երբ ընդամենը մի կադրից հանդիսատեսը հասկանա, որ այն ճապոնական է, երբ ամեն կադրից նա ծանոթանա ճապոնական նիստուկացին և ազգի առանձնահատկություններին:

Ի՞նչ սպասել մի երկրի ֆիլմարտադրությունից, որն ունի բավական հարուստ մշակույթ, երբեմն ստանդարտից դուրս մտածելակերպ ու ազգայինն ամեն ինչում պահելու միտում: Ճապոնական ֆիլմեր նայելն այդքան էլ հեշտ չէ, կարելի է ասել՝ ամեն մեկը չի կարողանա հասկանալ այն, ինչ ցանկացել է փոխանցել ֆիլմի վրա աշխատող յուրաքանչյուր ոք: Նրանց ֆիլմերը սիրում են համբերատարներին, երբեմն զարգացումները

դանդաղ են ընթանում, երբեմն թվում է, թե կադրը համարյա անշարժ է: Բայց, եթե մի փոքր ուշադիր լինենք, գեղանկարչական պատկեր հիշեցնող կադրում անգամ ասելիք կարող եք գտնել, եթե կարողանաք: Եթե այդ էլ չստացվի, ապա վստահ եղեք, որ այն՝ ասելիքը, անպայման առկա է, բայց՝ անհասանելի մեզ համար: Ճապոնական ֆիլմը պահանջում է նաև պերսոնաժների աչքերի խաղի, ժեստերի, կեցվածքի յուրահատուկ վերծանում և համապատասխան ընկալում, մանավանդ, երբ կադրում որևէ զգացմունքային պահ է: Այսինքն, կարելի է եզրակացնել, որ ազգայինի քարոզչությունը այլ երկրների ֆիլմարտադրությունից տարբերվելու կարևոր ու նկատելի չափանիշ է: Ընդհանրապես, անկախ ֆիլմի սյուժեից և ժանրից, Ճապոնիան ու ճապոնացին միշտ աչքի առաջ են: Հերոսներն ընտրվում են այնպես, որ իրենց խոսքն ու կերտած կերպարը համահունչ լինեն, ինչպես «Հիրոսիմա, իմ սեր» դրամայում: Գլխավոր հերոսները խաղում են ֆիլմում՝ կասկած չհարուցելով, որ իրենք պարզապես դերասաններ են: Երևի կմտածեք, որ բոլոր հաջողված ֆիլմերն են այդպես նկարահանվում: Այո՛, բայց ճապոնականի ևս մեկ առանձահատկությունը նրանում է, որ դերասաններին մի ֆիլմում տեսնելիս, հաջորդ ֆիլմում դժվար ես ճանաչում այլ կերպարի մեջ: Որովհետև նրանք չեն կարծրանում որևէ ամպլուայի կաղապարում: Սակայն յուրաքանչյուր, նույնիսկ ամենատարբեր կերպարներում, ճապոնացի դերասանները մնում են կատարյալ և՛ զգացմունքների արտահայտման, և՛ շարժուձևի, և՛ միմիկական ներկապնակի առումով:

«Կինեմատոգրաֆը առաջին հերթին մոնտաժ է» [3], - մեջբերում է Սերգեյ Էյզենշտեյնը: Ճապոնական կինոն հարուստ է դերասաններով և սյուժեներով: Եվ ճապոնական կինոն ընդհանրապես չի ճանաչում մոնտաժը: Մինչդեռ մոնտաժի սկզբունքը կարող էր համարվել ճապոնական կերպարվեստի հիմնական տարրը: Ճապոնական հիերոգլիֆները նույնպես կերպարվեստի տարրեր են: Այն, ինչ մենք անում ենք կինոյում, համեմատելով հնարավորինս նմանատիպ և իմաստային առումով չեզոք գրաֆիկական կադրերը, նկատվում է նաև հիերոգլիֆների դաշտում: Օրինակ՝ ջրի և աչքի պատկերումը նշանակում է «լաց», դռան նկարի մոտ ականջի պատկերումը նշանակում է «լսել», դանակ և սիրտ՝ «տխրություն»: Այս երևույթի օրինակների շարքը կարելի է շարունակել: Երկու պարզ հիերոգլիֆների համադրումով ուրվագծվում է գրաֆիկորեն «աննկարագրելին»: Եվ նշած հանգամանքը վկայում է այն մասին, որ մոնտաժը (ճապոնական իմաստով) տարալուծված է հենց ճապոնացու ենթագիտակցային շերտերում և գենետիկայի անհիմանալի խորքերում:

Անդրադառնանք Ռեդյարդ Քիպլինգի «Ծովից ծով» աշխատությանը, որտեղ բրիտանացի գրողը պատմում է Ճապոնիայում ստացած իր տպավորությունների մասին: Այդ նկարագրություններից անցել է ավելի քան հարյուր տարի, սակայն ի՞նչ է հարյուր տարին ճապոնացու համար:

- Նայեք առևտրականի կրպակին, - առաջարկում է եվրոպական ընթերցողին Ռեդյարդ Քիպլինգը… Կրպակի ճակատային մասը պատկառելի տեսք ունի: Այն պատրաստած է կես դյույմանոց փայտյա ձողերից, կիպ գամած միմյանց: Սակայն դուք չեք գտնի ոչ մի թերի ձող, դրանք կատարյալ միանման են: … Առևտրականը ճակատի կեսը ծածկել է ձիթաթղթով, քառորդ դյույմանոց փայտյա շրջանակների մեջ առած: Թղթին անհնար է գտնել թեկուզ մեկ անցք, ոչ մի շրջանակ թեքված չէ: Այդ տարածքում … տեղավորվել է ինքը՝ առևտրականը, ում հագին է երկնագույն խալաթ և հաստ սպիտակ գուլպաներ:

Նա թիկնել է բրնձի փափուկ խոտից ոսկեգույն կարպետին; կարպետը զարդարած է սև երիզով: … Այդ կարպետին ամոթ չէր լինի ճաշի սեղան գցել, եթե այնքան խոզ գտնվեիք, որ պահանջեիք այդ: Իսկ խանութպանը հանգիստ պառկած է դրան, երկնագույն խալաթի թևքով փաթաթած ձեռքով գրկել է պղնձյա բովարանը, որի պատերին՝ հազիվ նշմարվող բարակ գծերով պատկերված է աիարկու վիշապ: Բովարանը մինչև վերին եզրը լիքն էր մոխրով, բայց կարպետին չէիք նկատի և ոչ մի փոշու հատիկ: Առևտրականի կողքին է կանաչ կաշվից փոքրիկ պարկ, կարմիր ժապավենով կապած: Այդ պարկում է մանր կտրատած թութուն:

Խանութպանը լցնում է իր՝ կարմիր և սև լաքով զարդարած երկար ծխամորճը, վառում բովարանի ածխակտորից, երկու անգամ ներս առնում ծուխը, և ծխամորճը արդեն դատարկ է: Կարպետը մնում է անբիծ մաքուր: Նրա ետևում է բամբուկից և ինչ-որ գնդիկներից պատրաստած շիրման: Այն սահմանում է մյուս սենյակը. բաց ոսկեգույն հատակով և հարթ փայտյա առաստաղով: Սենյակը բացարձակ դատարկ է, եթե անտեսենք հատակին զցած վառ կարմիռ ծածկոցը: Այդ սենյակին հետևում է միջանցքը, որի փայլեցված փայտյա պատերում արտացոլվում է սպիտակ թղթե պատը:

Միջանցքի վերջում կանաչ ծաղկամանում աճում է գաճաճ սոճի, որը հստակ երևում է այդ արտասովոր ճապոնացուն, իսկ կողքին՝ բաց մոխրագույն ծաղկամանում, տնկած է կաս-կարմիր լեռնավարդը: Այդ ճապոնացին այդտեղ է տեղադրել լեռնավարդը, որպեսզի զմայլվի դրանով՝ աչքերի հանգստության համար, որովհետև այն նրան դուր է գալիս: Եթե սպիտակ մարդը լինի այդպիսի ճաշակի տեր, ապա նա իրեն

տեղ չի գտնի մեր աշխարհում: Առնտրականը պահում է իր բնակավայրը իդեալական մաքրության մեջ, և դա համապատասխանում է նրա արտիստիկ հոգեկերտվածքին: Ի՞նչ կարող ենք մենք սովորեցնել ճապոնացուն:

Այս դրվագը, ըստ իս, խորհրդանշական իմաստ է պարունակում Ճապոնիան ընկալելու և ճապոնականը գնահատելու դժվարությունները հաղթահարելու հարցում:

Վերջին 60 տարիների ընթացքում ճապոնական կինոարտադրության գլխավոր տարրերից մեկն են համարվում նաև վարդագույն ֆիլմերը (փինգու-էյգա): Այնուամենայնիվ, ճապոնական կինոինդուստրիայի հսկայական այս հատվածն անտեսված է եղել կինոքննադատների կողմից անգամ մինչև մեր օրերը: Փինգու-էյգա-ն ճապոնական կինեմատոգրաֆիայի մի ուղղություն է, որը պարունակում է մեծ քանակությամբ բռնության տեսարաններ և ունի էրոտիկ բովանդակություն: Տվյալ ֆիլմերի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ դրանք, հեռուստատեսությունից տեղափոխվելով կինոաշխարհ, սկսեցին մեծ հեղինակություն վայելել տարբեր կինոփառատոներում:

Այնուամենայնիվ, իմ հոգուն հարազատ և գեղագիտական զգայաններին հաճո եղել և մնում է «Լեգենդ Նարայամայի մասին» ֆիլմը, ռեժիսոր Սեխեյ Իմամուրա, 1983 թ.: Սյուժեն այնքան հեռու է մեզ ծանոթ իրավիճակներից, մեր պատկերացումից՝ կյանքի, բնության ընկալման, մարդկային և հանրային հարաբերությունների, ապրելաձևի, որ դժվարանում ես մոտենալ այդ ամենին ընդունված տրամաբանության միջոցներով: Դրա փոխարեն՝ ընկղմվում ես հեռավոր երկրի անսովոր աշխարհընկալման մթնոլորտում և տրվում զգացմունքային ասոցիացիաների հոսանքին:

Ֆիլմի սյուժեն շատ պարզ է. 19-րդ դար, ճապոնական խուլ գյուղ, գյուղացիների դաժան պայքար ֆիզիկական գոյատևման համար: Մի ընտանիքի պատմություն, որտեղ 69-ամյա կնոջ, նրա զավակների և թոռների շուրջ կատարվում են կենցաղային մի շարք իրադարձություններ: Դրվագներ, որոնք չեն տեղավորվում ոչ ճապոնական մոտեցման շրջանակներում. տղա երեխաների սպանություն, տարեց մարդկանց պարտադիր հանձնում Նառայամայի աստծուն, ծայրահեղ աղքատություն և դրանից բխող պրագմատիզմ՝ հարաբերություններում, անթաքույց, էրոտիզմից զուրկ սեքսուալ գործողություններ, տգեղ միջադեպեր և մահվան ուրվականի մշտական ներկայությունը ամենուրեք: Միջանցիկ գործողությունը շաղախված է հենց մահվան գործոնի վրա, որովհետև մարդիկ այդ գյուղում իրավունք չունեին 70 տարուց ավելին ապրելու:

Այդ տարիքին հասածներին իրենց ավագ որդիները ձմռանը տանում էին հեռավոր մի կիրճ՝ Նարայամա սարի ստորոտում և թողնում այնտեղ: Միայնակ, հարյուրավոր անցավորներ, առնտրից և անձրևից սպիտակած, կմախքներով շրջապատված: Շատ սովորական դարձած ավանդույթ, քանի որ ամեն կտոր հացը հաշված էր:

Գլխավոր հերոսը՝ Օրեն անունով կինը, հաջորդ ձմռանը պետք է հանձնվի սարի աստծուն: Եվ մենք վկա ենք դառնում, թե ինչպիսի հոգատարությամբ ու անձնազոհությամբ նա մահվան նախօրեին կարգավորում է իր ընտանիքի անդամների ապագա կյանքը: Օրենի կերպարը Մարկեսի Ուրսուլայի ճապոնացված տարբերակն է՝ նպատակասլաց, ուժեղ, սիրող, անձնազոհ:

Այս ամենն էկրանին անցնելուց հետո, ֆիլմի մոտավորապես 100-րդ րոպեին, հանդիսատեսն՝ իր համար անընդունելի գործողությունների և պատկերների տարափից շվարած, անսպասելի հայտնվում է մի մեծ զգացմունքի բացահայտման առջև: Այդ պահը գալիս է, երբ Օրենի որդին պետք է մորը վերցնի շալակը ու ընկնի երկար ու դժվար անցանելի ճանապարհ՝ դեպի Նարայամա սարը, մոր վերջին ճանապարհը:

Այդ ինչպիսի վստահություն պետք է ունենա ռեժիսորը, որ իր պայծառ ու մաքուր գերխնդրին հասցնելու համար հանդիսատեսին տանի այդպիսի «ցեխոտ» ու մռայլ թավուտներ միջով: Ինչպիսի համարձակություն պետք է ունենա ռեժիսորը, որ կենցաղային պղտորաջրից հանած պատկերների և դրվագների աղյուսներով կառուցի մոր և որդու սիրո բյուրեղյա դղյակը:

«Լեգենդ Նարաքմայի մասին» ֆիլմն միակն է իմ կյանքում այն առումով, որ կինոդահլիճից դուրս գալուն պես, մտել եմ երկրորդ անգամ դիտելու: Որովհետև միայն ավարտից հետո հասկացա, թե ինչ իմաստներ եմ աչքաթող արել ֆիլմի սկզբում (երիտասարդ լինելն էլ ունի իր թերությունները):

Որովհետև ֆիլմի ավարտից հետո ես զարմանքով հայտնաբերեցի, որ աչքերս խոնավացել են, և ես ոչ մի կերպ չեմ կարողանում դրա դեմն առնել:

Որովհետև միայն ավարտից հետո իմ ներքին տեսողության դաշտում՝ թվացյալ, իրար հետ ոչ մի կապ չունեցող դրվագներն ու կադրերը, մեկ վայրկյանում միահյուսվեցին և շողշողացին որպես սիրո ձոն, ենթարկվելով ռեժիսորական կամքին և ազնվությանը՝ իր արած գործի նկատմամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Интервью Квентина Тарантино, https://www.ivi.ru/titr/everything/tarantino
2. *Эйзенштейн С.М.* Монтаж (1938), http://biblioteka.teatr-obraz.ru/node/24956
3. Заметки о японском кино: все оттенки розового // https://cyberleninka.ru/article/n/zametki-o-yaponskom-kino-vse-ottenki-rozovogo

THE THOUSAND-WINGED CRANE OF JAPANESE CINEMA

A. Arakelyan

ABSTRACT

This article the main features of Japanese movie, the role and value of Japanese films in the world cinematography and also a unique approach of the Japanese filmmakers and their opinions about Japanese cinema.
Keywords: Japanese cinema, film industry, mounting, hieroglyphs.

ТЫСЯЧЕКРЫЛЫЙ ЖУРАВЛЬ ЯПОНСКОГО КИНО

А.Р. Аракелян

АННОТАЦИЯ

В данной научной статье рассматриваются особенности японского кино, роль и значение японских фильмов в мировой кинематографии. Также рассматривается уникальный подход японских режиссеров, их мнения о японском кино.
Ключевые слова: японское кино, киноиндустрия, монтаж, иероглифы.

Всемирно известный режиссер Стивен Спилберг, говоря о фильмах разных народов, выделил их героев и системы ценностей героев следующим образом:

1. В американских фильмах герой убивает всех ради закона.
2. Во французских фильмах – по любви.
3. В еврейских фильмах– ради веры.
4. В японских фильмах – ради чести.

Но со временем герои и их ценности меняются. Тарантино сказал в интервью: «Не следует разочаровываться или настаивать на том, что кино больше не является предшественником, потому что оно не похоже на предыдущие шедевры». Один из моих друзей-ученых рассказал мне об интересном эксперименте. Они бросают несколько обезьян в одну комнату, ставят лестницу посреди комнаты и бананы наверху лестницы. Когда одна из обезьян пытается подняться по лестнице, остальных хлестают холодной водой. Эта операция повторяется очень долго. Через некоторое время, как только обезь-

яны видят, что одна из них пытается подняться по лестнице, они начинают его бить и колотить. Затем в группу добавляют новых обезьян и решают, что больше никого не будут поливать, чтобы достать банан. Но как только старые обезьяны видят приближающегося к лестнице пришельца, они безжалостно наступают на него. В результате, приводят так много новых обезьян, что уже не знают, почему самые старые обезьяны, участвующие в эксперименте, побеждают новых обезьян. Просто так передавалось из поколения в поколение».

Это особенность сохранения стереотипов, окаменевших ценностей, мы не знаем, насколько они нам нужны, но мы все же хотим их сохранить.

Сегодня отечественные фильмы, их герои и цели героев изменились. В стране верховенства права – Америке – фильмы в основном о насилии и деньгах, смешанных с исконными инстинктами. И эта зараза тем или иным путем просочилась в кровеносную систему европейско-азиатского кинопроизводства.

BVO, известная общественная организация, уже два года проводит международный опрос среди общественности и профессионалов, классифицируя фильмы разных национальностей по их значимости. И японской киноиндустрии была приписана функция самой образовательной и научно-популярной. Дело в том, что, в отличие от зарубежного кинематографа, здесь главное, чтобы в каждом фильме присутствовала национальная искра. Акира Куросава утверждал, что японский фильм будет лучшим тогда, когда зрители по одному кадру поймут, что это – японский фильм, когда каждый кадр познакомит зрителя с японским бытом и национальными особенностями.

Чего ожидать от кинопроизводства в стране с очень богатой культурой, порой выходящей за рамки стандартного мышления и склонностью во всем сохранять национальное. Смотреть японские фильмы не так-то просто, можно сказать, что не каждый сможет понять, и что каждый, кто работал над фильмом, хотел передать. Их фильмы любят терпеливых, иногда развитие идет медленно, иногда кажется, что кадр практически неподвижен. Но если вы уделите немного внимания, вы сможете найти смысл даже в похожем на картину кадре. Если это не сработает, будьте уверены: то, что вы хотите сказать, доступно, но недоступно для нас. Японский фильм требует особой интерпретации игры глаз, жестов, позы персонажей, правильного восприятия, особенно когда в кадре присутствует эмоциональный момент. Другими словами, можно сделать вывод, что национальная пропаганда является сильным и заметным критерием и отличает японский кинематограф от кинопроизводства в других странах.

В общем, вне зависимости от сюжета или жанра фильма, Япония и японцы всегда действуют на виду. Персонажи подобраны таким образом, чтобы их слова и создаваемый ими образ соответствовали драме, а главные герои играют в фильме так, что не появляется даже тени сомнения, что они всего лишь актеры. Вы, наверняка, подумаете, что все успешные фильмы снимаются именно так. Да, но одна из особенностей японцев в том, что, когда вы видите актеров в одном фильме, вы с трудом узнаете их в другом персонаже следующего фильма. Потому что они не застаиваются в каком-либо амплуа. Но в каждом, даже самом разноплановом, образе японские актеры остаются безупречными по «выражению эмоций», «движению», «палитре мимики»…

«Кино – это прежде всего монтаж», – говорил Сергей Эйзенштейн. Японское кино богато актерами и сюжетами. И японское кино вообще не признает монтаж. Тогда как принцип редактирования можно было считать основным элементом японского изобразительного искусства.

Японские иероглифы – тоже элементы изобразительного искусства. То, что мы замечаем в кино, сравнивая насколько возможно семантически нейтральные графические кадры, также видно в области иероглифов.

Например, изображение водяного глаза означает «плачущий», изображение уха возле дверного рисунка означает «слушание», нож и сердце означает «грусть». Данный ряд примеров можно продолжить. Комбинация двух простых иероглифов очерчивает графически «неописуемое». И этот факт доказывает, что монтаж – в японском понимании – растворен в слоях подсознания японца, в неизвестных глубинах генетики.

Поговорим о произведении Редьярда Киплинга «От моря до моря», где британский писатель рассказывает о своих впечатлениях от Японии. С тех пор прошло более ста лет, но что такое сотня лет для японца?

«Посмотрите на будку торговца, – предлагает европейскому читателю Редьярд Киплинг, – Передняя часть будки выглядит респектабельно. Она сделан из полудюймовых деревянных прутьев, скрепленных между собой. Но бракованных стержней вы не найдете, они совершенно одинаковые. … Торговец прикрыл половину лба оливковой бумагой в деревянной рамке в четверть дюйма. В бумаге невозможно найти ни одной дырки, ни одна рамка не наклонена…В этом пространстве – сам торговец, одетый в синюю мантию и толстые белые носки.

Он оперся на золотой ковер из мягкой рисовой травы; Ковер декорирован черной окантовкой. … Было бы не постыдно бросить этот коврик на обеденный стол, если бы вы были настолько свиньей, что потребовали бы

этого. И лавочник спокойно лежит на нем, обнимая обернутой рукавом из голубой мантии рукой медную жаровню, на стенах которой тонкими линиями, едва заметными, изображен грозный дракон. Навес был доверху засыпан пеплом, но на ковре пыли не было. Рядом с торговцем лежит небольшая кожаная сумка зеленого цвета, перевязанная красной лентой. В ней – мелко нарезанный табак.

Лавочник наполняет свою длинную трубку, украшенную красным лаком, поджигает ее от угольной горелки, дважды вдыхает дым, и трубка уже пуста. Ковер остается безупречно чистым. Позади него ширма из бамбука и несколько шаров. Он отделяет другую комнату, со светлым золотистым полом и плоским деревянным потолком. Комната абсолютно пуста, если не обращать внимания на ярко-красное одеяло на полу. За этой комнатой находится коридор, глянцевые деревянные стены которого отражают белую бумажную стену.

В конце коридора в зеленой вазе растет карликовая сосна, которая хорошо видна этому необычному японцу, а рядом в светло-серой вазе посажена ярко-красная роза. Японец поставил ее там, чтобы полюбоваться ею для комфорта своих глаз, потому что она ему нравится. Если у белого человека будет такой вкус, ему не будет места в нашем мире. Торговец поддерживает свою резиденцию в безупречной чистоте, это соответствует его художественному складу ума. Чему мы можем научить японцев?».

Этот эпизод, на наш взгляд, имеет символическое значение в преодолении трудностей восприятия Японии и оценки японцев.

В течение последних 60 лет одним из основных элементов японского кинопроизводства считались розовые фильмы (пинг-эга). Тем не менее, эта огромная часть японской киноиндустрии до сих пор игнорируется критиками. Ping-aega – это ветвь японского кино, которая содержит большое количество сцен насилия и имеет эротический контент.

Особенность этих фильмов состоит в том, что они перешли из телевидения в мир кино и стали пользоваться огромной популярностью на различных кинофестивалях.

Тем не менее, с точки зрения эстетического восприятиянам нравился и продолжает нравиться фильм «Легенда о Нараяме» режиссера Сехея Имамура 1983 года.

Сюжет настолько далек от знакомых нам ситуаций, от нашего восприятия жизни, природы, человеческих и общественных отношений, образа жизни, что трудно подойти к нему с помощью общепринятой логики. Вместо

этого вы погружаетесь в атмосферу необычного мировоззрения в далекой стране, учитывая поток эмоциональных ассоциаций.

Сюжет фильма очень прост. XIX век, глухая японская деревня, ожесточенная борьба сельских жителей за физическое выживание. История семьи, в которой происходит ряд домашних событий вокруг 69-летней женщины, ее детей и внуков. Эпизоды, не укладывающиеся в неяпонский подход. Убийство мальчиков, насильственная отдача стариков богу Нараяме, крайняя нищета и вытекающий из этого прагматизм в отношениях, явные, эротические сексуальные действия, уродливые инциденты постоянное присутствие призрака смерти повсюду. Промежуточное действие смешано с фактором смерти, потому что людям в этом селе не разрешалось жить более 70 лет. Когда они достигали этого возраста, их старшие сыновья уводили их зимой в отдаленное ущелье, у подножия горы Нараяма, и оставляли там. Одного, в окружении сотен побелевших от солнца и дождя скелетов. Это было очень распространенной традицией, потому что каждый кусок хлеба был на счету.

Главная героиня, женщина по имени «Орен», следующей зимой должна была отправиться к богу гор. И мы видим, как старательно и самоотверженно он устраивает будущую жизнь членов своей семьи накануне своей смерти.

Образ Орен – это японская версия Урсулы Маркеса, целеустремленная, сильная, любящая, самоотверженная.

